

Բացատրություն
ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 28-ի թիվ 6/4
որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ
(«Դատաիրավական ԾԻԳ» պետական հիմնարկ)

հ/հ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
1.	ԾԻԳ-ի կողմից անցկացված կապալի մրցույթների գործընթացի ստուգմամբ պարզվել է. - Սևան քաղաքի դատարանի շինարարության մրցույթում նվազագույն գնային առաջարկ ունեցող «Բաղրամյանշին» ԲԲԸ կողմից մրցույթի ներկայացրած տեղեկատվությունը ստուգվել է մրցութային հանձնաժողովի կողմից: Այդ նպատակով ԾԻԳ-ը իրականացրել է ընկերության կողմից նախկինում կառուցված շենքի մակերեսի չափագրում և արձանագրել, որ մակերեսը 6 քմ-ով /0.4%/ չի բավարարում մրցույթի պահանջին՝ 1600 քմ: Բացի այդ, ընկերության ազատ շրջանառու միջոցները 9,400,0 հազ. դրամով պակաս են մրցույթի պայմաններով սահմանված 100,000.0 հազ. դրամից: Արդյունքում, «Բաղրամյանշին» ԲԲԸ գնային առաջարկը մերժվել է, և հաղթող է ճանաչվել «Մեծն Էրիկ» ՍՊԸ, որը ներկայացրել էր 142,347.1	Տվյալ դրվագում կիրառվել են փաստական տվյալների որոշակի աղավաղումներ: Ընթացիկ Հաշվետվությունում կոծկվել կամ թաքցվել են տվյալ մրցույթով «Բաղրամյանշին» ԲԲԸ հայտը մերժելու համար իրավասու անձանց կողմից որոշումներ կայացնելու իրական և էական նշանակություն ունեցող հետևյալ հիմքերը. - Այն փաստը, որ տվյալ մրցույթով «Բաղրամյանշին» ԲԲԸ <u>կեղծ և անարժանահավատ տեղեկություններ պարունակող տեղեկանք է ներկայացրել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Աղասյան» մասնաճյուղում իր դրամական միջոցների և առկա վարկային գծի չօգտագործված չափի մասին՝</u> նպատակ ունենալով հանձնաժողովին խաբեությամբ հիմնավորել մրցույթով սահմանված նվազագույն չափին համարժեք ազատ դրամական միջոցների առկայությունը: Այնինչ, մրցութային հանձնաժողովի գրավոր հարցմանը ի պատասխան, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ վարչության նախագահի գրությամբ պարզվել է, որ ընկերությունը մրցութին մասնակցելու օրվա դրությամբ <u>չի ունեցել հայտով ներկայացված նվազագույն չափով դրամական միջոցներ և փաստացի բանկի մասնաճյուղի կողմից թողարկված փաստաթղթով՝ իրական տվյալների կեղծումով, փորձել է սխալ տեղեկություններ ներկայացնել մրցութային հանձնաժողովին՝</u> տվյալ <u>մրցույթի որակավորման նվազագույն պահանջը բավարարելու նպատակով,</u>	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

	հազ. դրամով թանկ գնային առաջարկ:	- Փաստացի «Բաղրամյանշին» ԲԲԸ չի ունեցել 2006-2009 թվականների ընթացքում պահանջվող չափով նույն բնույթի և բարդության աշխատանքների իրականացման փորձ, այն է՝ <u>առնվազն 1600թ. մակերես ունեցող և 7600խմ. շինարարական ծավալ ունեցող 2 նոր վարչական կամ գրասենյակային նշանակության շենքի կամ շենքային համալիրի կառուցման փորձ</u>: Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է փաստաթղթերով ներկայացված ամենախոշոր ծավալով օբյեկտը և դրա վերաբերյալ համապատասխան հարցում է կատարվել «Դպրոցաշինություն ԾԻԳ» ՊՀ, որի պատասխանից ակնհայտ է, որ ընկերությունը <u>նույնիսկ մեկ շենք</u> կառուցելու փորձով չի բավարարում որակավորման պահանջներին: Որևէ այլ փաստաթղթով կամ տվյալներով չի հիմնավորվել, որ տվյալ ընկերությունը ունեցել է նշված ծավալներով 2 նոր վարչական շենքերի կառուցման փորձ: - Հետևաբար, համադրելով վերը նշված փաստական տվյալների ամբողջությունը, հանձնաժողովը որոշում կայացնելիս չէր կարող հիմք ընդունել միայն այն փաստը, որ պահանջվող և նախկինում կառուցված մակերեսը 6քմ-ով /իրականում ոչ թե 6քմ, այլ 8քմ է/ (0.4%) պակաս լինելու համար է մերժվել հայտը: - Վերը նշված բոլոր փաստերը արձանագրված են մրցույթի գնահատման և ՀԲ ներկայացվող արձանագրություններում, սահմանված եղանակով ներկայացված են եղել Համաշխարհային բանկին, ծրագրի կառավարման խորհրդին, ՀՀ կառավարությանը և վերջիններիս որոշումներով այդ փաստերը և մրցույթի շնորհման իրավաչափությունը հաստատված է: - Ելնելով վերը նշվածից, անկախ նվազագույն գնային առաջարկի գումարից, <u>մրցութային հանձնաժողովը պարտավոր էր որակագրկել «Բաղրամյանշին» ԲԲԸ հայտը՝ «խարդախ» գործելակերպ ցուցաբերելու և մրցույթի որակավորման նույնիսկ նվազագույն</u>	
--	---	--	--

		<u>պահանջներին չբավարարելու պատճառով:</u> <u>Հաշվի առնելով վերը նշվածը, կարծում ենք՝ անժխտելի է, որ ՀՀ վերահսկիչ պալատի Ընթացիկ Հաշվետվությունում տեղի է ունեցել որակավորման պահանջների բավարարման իմաստով էական նշանակություն ունեցող տեղեկությունների աղավաղում:</u> Կարծում ենք սույն դրվագում մտահոգիչ պետք է համարել այն փաստը, որ նշված բոլոր նյութերին ծանոթանալու հնարավորություն ունեցել է նաև վերահսկիչ պալատի ստուգող խումբը, սակայն վերջինս անտեսել է այդ ամենը: Ավելին, նշված փաստերի վրա ուղղակի ուշադրություն դարձնելու և իրական տվյալները չաղավաղելու վերաբերյալ հստակ կարծիք և փաստաթղթերի վրա հղումներ են ներկայացվել նաև վերահսկողության ընթացքում՝ միջանկյալ տեղեկանքի վերաբերյալ «Դատաիրավական ԾԻԳ» ՊՀ-ի 23.01.2013թ. թիվ 03/125 ելից գրությունով, որը ստացվել է ՀՀ վերահսկիչ պալատի կողմից 24.01.2013թ.: Սակայն այդ ամենը զարմանալիորեն անտեսվել է նաև վերջնական հաշվետվությունը կազմելիս:	
2	Իջևան քաղաքի դատարանի շենքի կառուցման մրցույթում «Երևանշին» ԲԲԸ և «Երևանշին ԳԱՄ» ՍՊԸ կոնցորցիումի մրցութային առաջարկը ԾԻԳ-ի կողմից մերժվել է, քանի որ բանկի կողմից երաշխիքային գումարի տրամադրման վերաբերյալ տեղեկանքում նշվել է միայն «Երևանշին» ԲԲԸ, և արդյունքում հաղթող է ճանաչվել «Ախուրյանի կոոպչին» ՍՊԸ-ն, որը ներկայացրել էր 34, 764.3 հազ. դրամով թանկ գնային առաջարկ:	Իջևան քաղաքի դատարանի շենքի կառուցման մրցույթով «Երևանշին» ԲԲԸ և «Երևանշին ԳԱՄ» ՍՊԸ կոնսորցիումի մրցութային առաջարկը մերժելու հիմքերի մասին հաշվետվությունում նշվածը նույնպես աղավաղված է: Այսպես, հաշվետվությունում ներկայացվածի համաձայն անհասկանալի իրավական բառակապակցությամբ՝ <u>«բանկային երաշխիքի տրամադրման վերաբերյալ տեղեկանքի»</u> պատճառով է հայտը մերժվել: - Ընթացիկ Հաշվետվությունում հղում է կատարված անհասկանալի և գոյություն չունեցող ինչ-որ երաշխիք տրամադրելու վերաբերյալ <u>«տեղեկանքի»</u>, որում նշված է կոնսորցիումի միայն մեկ անդամ: Տեղեկացնենք, որ նման տեսակի կամ բնույթի «տեղեկանք» ներկայացնելու պահանջ ընդհանրապես գոյություն չունի և որևէ անձի կողմից չի էլ ներկայացվել: Իրականում տվյալ կոնսորցիումի հայտը մերժվել է ոչ թե ինչ-որ «տեղեկանք»-ի պատճառով, այլ մրցութային գործընթացով հայտի ապահովման համար կարևորագույն փաստատուղթ համարվող <u>բանկային երաշխիքը ոչ պատշաճ ներկայացնելու հետևանքով, այն է՝ կոնսորցիում</u>	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

		<u>կազմելու դեպքում դրա բոլոր մասնակիցների անվանումները պարտադիր պետք է նշված լինեն երաշխիքում:</u> Այսպես, անկախ նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու փաստից, մրցութային փաստաթղթերի Բաժին 1. «Ցուցումներ Հայտատուներին» կետ 17.6 պահանջների համաձայն <u>մրցութային հանձնաժողովը պարտավոր էր առանց որևէ լրացուցիչ մեկնաբանությունների գնահատել տվյալ հայտը որպես մրցութային պահանջներին էապես չբավարարող և մերժել այն:</u> Տվյալ որոշումը հաստատվել է համապատասխանաբար կառավարման խորհրդի, Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության կողմից և տվյալ պարագայում այլ եղանակով գործելը իրապես կհանգեցներ խախտում կատարելուն: - Կրկին հատկանշական է, որ <u>նույնիսկ նշված փաստերի վրա ուղղակի ուշադրություն դարձնելու և իրական տվյալները չաղավաղելու վերաբերյալ հստակ կարծիք ներկայացնելուց հետո այս դրվագը նույնպես վերջնական հաշվետվություն կազմելիս ամբողջապես անտեսվել է:</u>	
3	Համաշխարհային բանկի գնման ուղեցույցի 1.2 հոդվածով սահմանված առաջնային պահանջն է՝ ծրագրի խնայողաբար և արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը: Սակայն ԾԻԳ-ը այդ նպատակին հասնելու համար չի դիմել Համաշխարհային բանկին՝ թույլ տալ հաշվի չառնել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերում առկա՝ հրավերով սահմանված որակավորման պայմաններից ոչ էական շեղումները:	Համաշխարհային բանկի գնման ուղեցույցները չեն սահմանում որևէ դրույթի առաջնայնություն մնացած դրույթների համեմատ: Հետևաբար, Համաշխարհային բանկի ուղեցույցների բոլոր պահանջները պետք է դիտարկել դրանց ամբողջականության մեջ, հաշվի առնելով տվյալ իրավահարաբերության նկատմամբ բոլոր պահանջների համադրությունը: Հաշվետվության տվյալ դրվագը անտեսում է լիովին հիմնավորված որոշումների առկայությունը, փաստորեն աղավաղելով իրական տվյալները և թաքցնելով ամբողջական տեղեկատվության արտացոլումը, միանգամայն անհիմն եզրահանգում է ներկայացնում Համաշխարհային բանկի ընթացակարգերի պահանջները չկատարելու մասին: <u>Կարծում ենք, որ այդ ընթացակարգերի շեղումներին հետևողը տվյալ դեպքում հենց Համաշխարհային բանկն է հանդիսանում, որն էլ, պատշաճ տեղեկացված լինելով բոլոր կայացված որոշումների մասին, սահմանված կարգով հաստատել է գնահատող հանձնաժողովների համապատասխան որոշումները:</u>	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

4	Փաստորեն, հիմնելով Համաշխարհային բանկի գնման ուղեցույցով սահմանված մրցույթների անցկացման ընթացակարգի որոշակի դրույթներին, ԾԻԳ-ը երկու մրցույթներով մերժել է կապալի պայմանագրերով ստանձվող պարտավորությունների կատարման համար էական ազդեցություն չունեցող ֆորմալ բնույթի անհամապատասխանություններ պարունակող նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերը, որի արդյունքում պայմանագրերի արժեքը թանկացել է գումարային 177,111.4 հազ. դրամով, և նվազել է վարկային միջոցների օգտագործման արդյունավետությունը:	Փաստացի <u>ՀՀ վերահսկիչ պալատը ընթացիկ հաշվետվությունում հայտատուների կողմից կեղծ փաստաթղթեր ներկայացնելու պարագայում, մրցույթի որակավորման պահանջներից գրեթե որևէ մեկին չբավարարելը և մրցութային հայտը սահմանված կարգով բանկային երաշխիքով չապահովված լինելը որակել է որպես «էական ազդեցություն չունեցող ֆորմալ բնույթի անհամապատասխանություններ»</u>: Կարծում ենք, որ եթե կեղծ տվյալներ պարունակող հայտերը գնումներում պետք է այսուհետ անտեսվեն /բանի որ ըստ ՀՀ վերահսկիչ պալատի՝ դրանք հանդիսանում են «ֆորմալ բնույթի անհամապատասխանություններ»/, ապա այդ մասին հենց այդպես էլ պետք էր առաջարկել հաշվետվության «Առաջարկություններ» բաժնում ԾԻԳ-ին և ՀՀ կառավարությանը: Ավելին, փոխարենը պետք չէր նաև առաջարկել հետևել ՀԲ-ի գնման ուղեցույցների պահանջներին: Միաժամանակ կարծում ենք, որ <u>կեղծ տվյալներ ներկայացրած մասնակցի գնառաջարկի և երկրորդ տեղը զբաղեցրած գնառաջարկի գումարային տարբերությունը /շուրջ 177,111.4 հազ. դրամ/ անհիմն պետք չէ որակել որպես «անարդյունավետ ծախս»</u>:	Տվյալ դրվագում եզրահանգումը կատարված է փաստական տվյալները աղավաղելու և իրականությունը չնշելու արդյունքում: Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:
5	Համաձայն ՀՀ կառավարության 22.12.1999թ. թիվ 765 և 07.10.2010թ. թիվ 1369-Ն որոշումների՝ ԾԻԳ-ը շինարարական աշխատանքների կապալի մրցույթների արդյունքները ներկայացրել է ՀՀ կառավարության հաստատմանը: ԾԻԳ-ի կողմից կնքած պայմանագրերով շինարարական վեց օբյեկտի կառուցման համար ՀՀ կառավարության 12.03.2009թ. թիվ 238-Ա, 10.09.2009թ. թիվ 1022-Ա, 22.07.2010թ. թիվ 913-Ն, 30.12.2010թ. թիվ 1754-Ա և 03.03.2011թ. թիվ 198-Ա որոշումներով մրցույթի արդյունքներով հաստատված կապալի պայմանագրերի արժեքը գումարային կազմել	Բոլոր նշված որոշումների կարգավորման առարկա է հանդիսացել ՀՀ կառավարության կողմից մրցույթի արդյունքների /այլ ոչ թե կնքվելիք կապալի պայմանագրերի արժեքի առավելագույն շեմի/ հաստատումը: Համաձայն կնքված պայմանագրերի պահանջների՝ նշված <u>բոլոր պայմանագրերի արժեքները որոշվում են փաստացի կատարված ծավալների համաձայն</u>, հիմք ընդունելով պայմանագրով ամրագրված աշխատանքների միավոր արժեքները: Հետևաբար պայմանագրի արժեքները կարող են և նվազեցվել և ավելանալ կախված փաստացի կատարման ենթակա աշխատանքների ծավալներից: <u>ՀՀ կառավարության որևէ որոշմամբ և ոչ էլ կնքված կապալի պայմանագրերով սահմանված չէ այնպիսի մի դրույթ կամ պահանջ, որ մրցույթի արդյունքում առաջարկված կապալի պայմանագրի արժեքը հանդիսանում է անփոփոխ և անկախ փաստացի իրականացման ենթակա ծավալներից դրա գինը չի կարող գերազանցել սկզբնական արժեքը</u>: Հետևաբար, կապալի պայմանագրերի գումարային արժեքը նշելը տվյալ դեպքում չունի այլ նպատակ, քան դրա գերազանցման պարագայում մտացածին	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

	է 3,299,919.9 հազ. դրամ:	խախտման պատկեր ներկայացնելու միտում:	
6	Պետական մարմինների բյուջետային միջոցների շրջանառումը իրականացվում է ՀՀ կառավարության 18.01.2002թ. թիվ 48 որոշմամբ սահմանված կարգով, ըստ որի՝ ՀՀ գանձապետարանի կողմից ֆինանսական միջոցների նկատմամբ նախնական հսկողության իրականացման պայմաններում պետական մարմինը նույն անձին՝ միայն մեկ անգամ, պայմանագրի գնից ավելի գումար կարող է վճարել լրացուցիչ գնման անհրաժեշտությունը հիմնավորելու, պայմանագրով ստանձնած պարտավորությունների փոփոխությունը պատշաճ կարգով ձևակերպելու և լիազոր մարմնի համաձայնությունը ստանալու դեպքում: «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջն ապահովելու և միջազգային համաձայնագրերի շրջանակներում բյուջետային միջոցների շրջանառումը գանձապետական միասնական հաշվով կատարելու համար ՀՀ կառավարության 25.03.2010թ. թիվ 324-Ն որոշմամբ ԾԻԳ-երի հաշիվներն առևտրային բանկերից տեղափոխվել են գանձապետական միասնական հաշիվ: Սակայն, նույն որոշմամբ սահմանվել է, որ ՀՀ գանձապետարանը ԾԻԳ-երի ֆինասական միջոցների նկատմամբ նախնական հասկողության գործառույթներ չի իրականացնում: ՀՀ	Ակնյալորեն անտեսելով Հայաստանի Հանրապետության Սահմանդրության 6-րդ հոդվածի 3-րդ մասի հիմնարար դրույթը, Հայաստանի Հանրապետության և Միջազգային Զարգացման Ընկերակցության միջև կնքված մի շարք միջազգային համաձայնագրերի դրույթները և պահանջները, ինչպես նաև ՀՀ և ՄԶԸ միջև «Դատաիրավական բարեփոխումներ երկրորդ ծրագրի» ֆինանսավորման համաձայնագրի դրույթները, ՀՀ ֆինանսների նախարարի 28.12.2010թ. թիվ 876-Ն և ՀՀ արդարադատության նախարարի 24.12.2010թ. թիվ 247-Ն համատեղ հրամանի պահանջները, անհիմն եզրահանգում է կատարված և այնուհետև <u>ՀՀ կառավարությանը անհիմն առաջարկություն է ներկայացված՝ փաստացի անտեսել և խախտել ստանձնած միջազգային համաձայնագրերի պահանջները:</u> ՀՀ կողմից միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների համաձայն՝ ՀՀ գանձապետարանը չի կարող նախնական հսկողություն իրականացնել ԾԻԳ-ի նկատմամբ և տվյալ դեպքում ՀՀ գանձապետարանի կողմից նախնական հսկողության բացակայության վերաբերյալ դրույթը բացարձակապես տեղին չէ, ինչպես նաև տեղին չէ նման հսկողության բացակայության հետևանքով իբրև թե ԾԻԳ-ի գործողությունները որպես խախտում որակելը: <u>Տվյալ պարագայում ՀՀ գանձապետարանը և ԾԻԳ-ը գործել են բացառապես իրենց իրավասությունների շրջանակում, ՀՀ օրենսդրության պահանջների խիստ պահպանմամբ:</u> Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության որոշումներով չեն սահմանափակվում պայմանագրային արժեքների առավելագույն գումարները: Փոխարենը նշված որոշումների կարգավորման առարկա է հանդիսացել բացառապես մրցույթի արդյունքների հաստատումը: Ընթացիկ հաշվետվությունում ներկայացվել է Աղյուսակ 2, որում կատարվել է մի շարք դատարանների շենքերի մրցույթի պահին հաղթող կազմակերպությունների առաջարկված արժեքի (աղյուսակում նշված է որպես «ՀՀ կառավարության	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

զանձապետարանի կողմից նախնական հսկողության բացակայության պայմաններում ԾԻԳ-ը, առանց շինարարական կապալի պայմանագրերի փոփոխության կամ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու, կատարողական ակտերով ընդունել և վարկային միջոցների հաշվին կապալառուներին վճարել է ՀՀ կառավարության որոշումներով հաստատված պայմանագրային արժեքից 223,824.7 հազ. դրամով կամ 6.8%-ով ավելի /աղյուսակ 2/:	որոշումով հաստատված պայմանագրային արժեք») և պայմանագիրը իրականացնելու և ավարտելու արդյունքում ձևավորված վերջնական պայմանագրի արժեքների «տարբերությունը»: Ընդ որում, նշված աղյուսակի վերլուծական մասում, ակնհայտորեն աղավաղելով իրական փաստերը և տվյալները, եզրահանգում է կատարված այն մասին, որ այդ օբյեկտների գները գերազանցել են «զնագոյացման գործող կարգով հաշվարկված այդ օբյեկտների նախահաշվային արժեքները»: <u>Տվյալ դեպքում կոծկվել և թաքցվել է այն փաստը, որ պայմանագրի այսպես կոչված «տարբերությունների» զգալի մասը վերաբերվում է նույն օբյեկտների նախահաշիվներում փաստացի չներառված, փորձաքննություն անցած նախահաշիվներում բացթողումների արդյունքում լրացուցիչ և անհրաժեշտ աշխատանքների իրականացման արժեքները:</u> <u>Ակնհայտ սուտ է այն դրույթը, որ «ԾԻԳ-ը, առանց շինարարական կապալի պայմանագրերի փոփոխության կամ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու, կատարողական ակտերով ընդունել և վարկային միջոցների հաշվին կապալառուներին վճարել է» գումարներ՝ բոլոր կատարված աշխատանքների համար պայմանագրով սահմանված կարգով, մինչև ցանկացած լրացուցիչ աշխատանքի իրականացումը պատվիրատուի, կապալառուի, տեխնիկական հսկիչի միջև կնքվել են պայմանագրով սահմանված ընթացակարգով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը /փոփոխման նախահաշվի համաձայնագրերը/, դրանք ստորագրվել են բոլոր նշված անձանց կողմից և վավերացվել են կնիքներով:</u> Ավելացնենք նաև, որ <u>համաձայն կնքված միջազգային համաձայնագրերի և ՀՀ կառավարության որոշումների պահանջների և հիմնարկի կանոնադրության պահանջների «Դատաիրավական բարեփոխումներ երկրորդ վարկային ծրագրի» շրջանակներում «Դատաիրավական ԾԻԳ» պետական հիմնարկն է իրավասու այն պետական մարմինը, որը, իրականացնելով պատվիրատուի իրավասություններ, միանգամայն իրավունք ունի</u>	
--	--	--

		<u>մրցութային փաստաթղթերի ծավալաթերթերում ավելացնել օբյեկտների փորձաքննություն անցած նախահաշիվներում փաստացի չներառված կամ բացթողումների արդյունքում չընդգրկված լրացուցիչ և ծրագրի նպատակների համար անհրաժեշտ աշխատանքներ:</u> Մասնավորապես, նշված իրավասությունը հստակ սահմանված է նաև ՀՀ կառավարության կողմից 21.04.2011 թիվ 447-Ն որոշմամբ հաստատված հիմնարկի կանոնադրության 8-րդ կետի 7-րդ ենթակետով՝ <u>ԾԻԳ-ին շնորհված է Հայաստանի Հանրապետության կառավարության անունից համապատասխան ծրագրում նշված աշխատանքների պատվիրատուի գործառույթների իրականացման իրավասությունը:</u>	
7	Հաղթող ճանաչված կապալառուների գնային առաջարկներով կնքած կապալի պայմանագրերի ստուգմամբ պարզվել է, որ 9 շինարարական օբյեկտից եղեգնաձոր և Իջևան քաղաքների դատարանների շենքերի կառուցման համար մրցույթների արդյունքներով տնտեսումը կազմել է համապատասխանաբար՝ 50,554.9 հազ. դրամ և 13,648.3 հազ. դրամ, իսկ 7 օբյեկտի պայմանագրային գները գերազանցել են գնագոյացման գործող կարգով հաշվարկված այդ օբյեկտների նախահաշվային արժեքները /ներառյալ՝ բոլոր լիմիտավորված ծախսերը և 11% շահույթը/: Ստուգումը կատարվել է մրցույթի գնման առարկայի ծավալաթերթերի ծավալները ճշտելու և բոլոր տողերը ՀՀ քաղաքաշինության նախարարի 16.06.2008թ. թիվ 41-Ն հրամանով հաստատված՝ «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգին» համապատասխան հաշվարկելու միջոցով, և հանրագումարը ըստ յուրաքանչյուր օբյեկտի ամփոփվել է /աղյուսակ 3/:	Տվյալ դրվագում առանց որևէ փաստաթղթային հիմնավորման /իսկ նման պահանջ մեր կողմից ներկայացվել է բանավոր նախկինում և մեր գրավոր առարկություններում/ ակնհայտորեն կեղծ դրույթ է ամրագրված այն մասին, որ «ստուգումը կատարվել է մրցույթի գնման առարկայի ծավալաթերթերի ծավալները ճշտելու և բոլոր տողերը ՀՀ քաղաքաշինության նախարարի 16.06.2008թ. թիվ 41-Ն հրամանով հաստատված՝ «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգին» համապատասխան հաշվարկելու միջոցով, և հանրագումարը ըստ յուրաքանչյուր օբյեկտի ամփոփվել է»: ՀՀ վերահսկիչ պալատին ուղղված մեր բանավոր և գրավոր խնդրանքները՝ մեզ տրամադրել նման բոլոր «հաշվարկները», այդպես էլ մնացել է անպատասխան և ընդհանրապես դրանք չեն տրամադրվել՝ պարզապես նման «հաշվարկների» բացակայության պատճառով: Առավել ուշադրություն խնդրում ենք դարձնել Աղյուսակ 3-ում Մեղրի քաղաքի դատարանի կառուցում տողի այսպես կոչված «հաշվարկված նախահաշվային արժեք» սյունակում նշված 409,131.7 հազ. դրամին, ինչի հաշվարկը որևէ ողջամիտ տրամաբանությամբ, առանց դիտավորյալ կամ անփութությամբ կատարված հաշվարկների աղավաղումների ուղղակի հնարավոր չէ ստանալ: Այսինքն, <u>տվյալ դեպքում նույնպես Ընթացիկ հաշվետվությունում ամրագրվել է ակնհայտ կեղծ</u>	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

		<u>դրույթ, որի միակ նպատակն է ստեղծել խախտումների առաջացման պատկեր:</u> Ի տարբերություն ՀՀ վերահսկիչ պալատի կողմից կազմված աղյուսակների /որոնցում ներառված են անհիմն տվյալներ/, սույն փաստաթղթին լից Հավելված 1-ով <u>ներկայացնում ենք բոլոր շենքերի շինարարության գծով իրական պատկեր արտացոլող և դրա ամբողջական փաստաթղային հիմնավորում ունեցող հաշվարկային աղյուսակ:</u> <u>Ընդ որում, մեր ներկայացրած աղյուսակում սկզբնական և ավարտի պահին ցանկացած գնային տարբերություն ամբողջապես հանդիսանում է համեմատվող նախահաշիվներում փաստացի չներառված, չհաշվարկված, սակայն կատարման համար անհրաժեշտ լրացուցիչ աշխատանքների փաստացի հանրագումար, ինչը հանդիսանում է ԾԻԳ-ի իրավասությունը և դրա իրականացումը թույլատրելի է համաձայն կարգավորող փաստաթղթերի:</u> Տվյալ Աղյուսակից ակնհայտ է դառնում նաև այն, որ բոլոր շենքերի համար մրցույթներ կազմակերպելու արդյունքում <u>ընդհանուր հանրագումարային տնտեսումը կազմում է 26,741.9 հազ. ՀՀ դրամ (4,425,971.38 հազ. դրամ – 4,399,229.48 հազ. դրամ),</u> այլ ոչ թե ուղղակիորեն մտացածին և հաշվետվության Աղյուսակ 3-ի հանրագումարով «վարկային միջոցների անարդյունավետ ծախս» որակված 270,223,3 հազ. դրամի չափով «տարբերություն»-ը: <u>Հարկ է հստակ նշել, որ ԾԻԳ-ը, հանդիսանալով ծրագրի պատվիրատու, միջազգային համաձայնագրերի, ՀՀ օրենսդրության և իր կանոնադրության պահանջների համաձայն օժտված է անհրաժեշտ բոլոր իրավասություններով, որպեսզի առանց որևէ այլ մարմնի հետ նախապես համաձայնեցումներ ձեռքբերելու ինքնուրույն որոշում կայացնի ցանկացած շինարարական պայմանագրի շրջանակներում լրացուցիչ անհրաժեշտ աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:</u> <u>Միակ ընթացակարգային սահմանափակումը ամրագրված է Համաշխարհային բանկի</u>	
--	--	---	--

		<u>շինարարական աշխատանքների գնումը կարգավորող ուղեցույցներով, որի պահանջների համաձայն պայմանագրի արժեքի 15% գերազանցող աշխատանքի դեպքում ՄԻԳ-ը կարող է լրացուցիչ աշխատանքների պատվերը արձակել միայն Համաշխարհային բանկից համաձայնեցում ստանալուց հետո: Սակայն Ծրագրի ամբողջ պատմության մեջ նման համաձայնեցման կարիք չի առաջացել:</u>	
8	Օրինակ, Չարենցավան քաղաքի դատարանի շենքի կառուցման ընթացքում «Արարատշին» ՓԲԸ-ի կատարողական ակտերով մեկ գծամետր համակարգչային մալուխի, միջնորմային սալերի շարվածքի և ջրագծի փորձարկման արժեքները անհիմն ընդունվել են սահմանված նախահաշվային արժեքներից համապատասխանաբար՝ 21.6, 5.8 և 690 անգամ կամ գումարային՝ 36,234.3 հազ. դրամով թանկ, իսկ ծավալաթերթի այդ և մնացած տողերը վերահաշվարկելու արդյունքում օբյեկտի արժեքի թանկացումը գումարային կազմել է 20,063.1 հազ. դրամ:	Հաշվետվության տվյալ դրվագում նշվել է մրցույթի արդյունքում Չարենցավանի պայմանագրից վերցված նախահաշվում ամրագրված արժեքների համեմատ միայն մի քանի միավոր արժեքներ, որոնք նախահաշվից թանկ են առաջարկվել կապալառուի կողմից: Հաշվետվությունում ակնհայտորեն չի բացահայտվել այն փաստը, որ նույն պայմանագրում մի շարք այլ միավոր արժեքներ /ընդհուպ մինչև 142 անգամ/ նախահաշվի համեմատ էժան են /որոնք ընդհանուր գումարով կազմում են ավելի քան 68,712 հազ. դրամ, ինչը առանձին ցանկով տրամադրվել էր ստուգող խմբին և դրա մասին հիշատակվել է նաև առարկություններում: Այսպես առանց որևէ հիմնավորումների, ակնհայտ աղավաղված ներկայացնելով այդ փաստերը, հաշվետվությունում եզրահանգում է կատարված տվյալ պայմանագրի արժեքը 20,063.1 հազ. դրամի չափով թանկ լինելու վերաբերյալ: Կարծում ենք բավարար կլինի տեղեկացնել որ տվյալ օբյեկտը, ունենալով 396,832,7 հազ. դրամ փորձաքննություն անցած նախահաշվային արժեք, փաստացի իրականացվել է 384,414.8 հազ. դրամ արժեքով, ինչը ներառում է նաև բոլոր այն լրացուցիչ աշխատանքները, որոնք չկային սկզբնական նախահաշվում: Ակնհայտ է, որ նույնիսկ այդ լրացուցիչ աշխատանքների արժեքը չնվազեցնելու պարագայում տվյալ օբյեկտը 12,417.9 հազ. դրամով ավելի էժան է, քան դրա փորձաքննության անցած նախահաշվային արժեքն է: Արդյունքում, խեղաթյուրելով մի շարք նախահաշվային արժեքներ, չհիմնավորված և ակնհայտ սխալ եզրահանգում է կատարված	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

		վարկային միջոցների ինչ-որ անարդյունավետության վերաբերյալ:	
9	Փաստորեն, շինարարական օբյեկտների մրցույթի գնման առարկայի ծավալաթերթի ծավալները չճշտելու և ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգին» համապատասխան հաշվարկված նախահաշվային արժեքները գերազանցող գնով կապալի պայմանագրեր կնքելու արդյունքում վարկային միջոցների անարդյունավետ ծախսը կազմել է 270,223.3 հազ. դրամ:	<u>Ստորև կից Հավելված 1-ով ներկայացրած աղյուսակում սկզբնական և ավարտի պահին ցանկացած գնային տարբերություն ամբողջապես հանդիսանում է համեմատվող նախահաշիվներում փաստացի չներառված, չհաշվարկված, սակայն կատարման համար անհրաժեշտ լրացուցիչ աշխատանքների փաստացի հանրագումար, ինչը հանդիսանում է ԾԻԳ-ի իրավասությունը և դրա իրականացումը թույլատրելի է համաձայն կարգավորող փաստաթղթերի:</u> Սույն Աղյուսակից ակնհայտ է դառնում նաև այն, որ բոլոր շենքերի համար մրցույթներ կազմակերպելու արդյունքում <u>ընդհանուր հանրագումարային տնտեսումը կազմում է 26,741.9 հազ. ՀՀ դրամ (4,425,971.38 հազ. դրամ – 4,399,229.48 հազ. դրամ),</u> այլ ոչ թե ուղղակիորեն մտացածին և հաշվետվության Աղյուսակ 3-ի հանրագումարով <u>«վարկային միջոցների անարդյունավետ ծախս»</u> որակված 270,223,3 հազ. դրամի չափով «տարբերություն»-ը: Վարկային միջոցների 270,223.3 հազ. դրամ գումարը անարդյունավետ ծախս որակելը անհիմն է, քանզի ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգին» համապատասխան հաշվարկված նախահաշվային արժեքների համեմատ /չհաշված նախահաշիվներում չներառված լրացուցիչ աշխատանքները/ <u>ընդհանուր հանրագումարային տնտեսումը կազմում է 245,304.08 հազ. ՀՀ դրամ այլ ոչ թե անհիմն հաշվարկներով առաջացող գումարներ:</u> <u>«Դատախիրավական բարեփոխումներ երկրորդ ծրագրի» շինարարական աշխատանքների կատարման ծրագրի արդյունավետությունը գնահատելու համար դեռևս մինչև վարկային համաձայնագրի կնքումը ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի միջև բանակցությունների ընթացքում սահմանվել է Ծրագրի Զարգացման Թիրախ՝ մինչև ծրագրի ավարտը կառուցել առնվազն 20,000քմ դատարանների և դատական</u>	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

		համակարգի օժանդակ շենքերի և շինությունների օգտակար մակերեսներ: Նշված թիրախը ամրագրված է Ծրագրի Գնահատման Փաստաթղթում /տես էջ 40/, որն հանդիսանում է վարկային համաձայնագրի հիմքը և առկա է Համաշխարհային Բանկի կայքում՝ http://www-wds.worldbank.org/external/default/WDSCContentServer/WDSP/IB/2007/04/04/000112742_20070404092500/Rendered/PDF/383610IDA1R20071003411.pdf Բնականաբար, ծրագրի արդյունավետության վերաբերյալ եզրահանգում կատարելու համար անհրաժեշտ է գնահատման հիմքում դնել տվյալ հարցը կարգավորող առաջնային փաստաթուղթը և դրանում ներառված տվյալները: Համաշխարհային բանկը իր պաշտոնական առաքելությունների ընթացքում 2012թ. դեկտեմբերի 31 դրությամբ արդեն իսկ արձանագրել է սահմանված թիրախային արդյունքը գերազանցելու վերաբերյալ և այդ ուղղությամբ Հայաստանի Հնարապետության և Համաշխարհային Բանկի համաձայնեցված կարգով արդյունավետությունը փաստացի արդեն իսկ արձանագրված է: Նշված փաստաթուղթը նույնպես առկա է ՀԲ-ի պաշտոնական կայքում: Հետևաբար, ՀՀ վերահսկիչ պալատի կողմից կատարված շահարկումները /օրինակ՝ համեմատելով կեղծ տվյալներ ներկայացրած հայտատուի և երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցի առաջարկի տարբերությունը/ ծրագրի շինարարական աշխատանքների արդյունավետությունը որոշելու վերաբերյալ պարզապես անհիմն են:	
10	Ստուգմամբ պարզվել է, որ երբ ծավալաթերթերի առանձին տողերով ներկայացվել է նախահաշվայինից ցածր գնային առաջարկ՝ օբյեկտի կառուցման ընթացքում կապալառուները այդ աշխատանքները կատարել են ոչ իրենց շահույթի հաշվին գնային առաջարկի սահմաններում /աղյուսակ 4/:	Տվյալ պարագայում ակնհայտորեն խճճված և ողջամտության տարր չպարունակող /օրինակ՝ այդ ո՞ր իրավական նորմով է սահմանված, որ կապալառուն պետք է աշխատանք կատարի միայն իր շահույթի հաշվին/, անհասկանալի շարադրանքով և այնուհետև դրան հետևող աղյուսակում ակնհայտ սխալ, խեղաթյուրված միավոր արժեքների կամայական համեմատությամբ կրկին փորձ է արվել խախտում որակել նույնիսկ այն դրվագներում, երբ պայմանագրի տվյալ միավոր գինը կապալառուի կողմից ավելի	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

		ցածր է եղել առաջարկված, քան դա ամրագրված է եղել փորձաքննություն անցած նախահաշվում: Ավելին, նման եզրահանգում կատարելիս նույնիսկ անտեսվել է այն փաստը որ տվյալ պայմանագրի իրականացման արդյունքում նախահաշվայինի համեմատ տեղի է ունեցել փաստացի տնտեսում /օրինակ՝ ինչպես արդեն նշել ենք վերևում, Չարենցավանի դատարանի շենքի վերաբերյալ շուրջ 12,417.9 հազ. դրամի չափով/: Որպես փաստական տվյալների աղավաղման ապացույց, նշենք, որ այդ Աղյուսակ 4-ում «<i>նախահաշվային</i>» և «<i>ծավալաթերթով գնային առաջարկ</i>» սյունակներում նշված գները /որոնք ներառում են ԱԱՀ, աշխատանքի իրականացման արժեքը և մնացած բոլոր հարակից ծախսերը/ առավել տպավորիչ դարձնելու և որպես խախտման երևույթ նկարագրելու նպատակով համեմատվել է տվյալ աշխատանքը իրականացնելու զուտ նյութի արժեքի հետ: Օրինակ՝ Աղյուսակ 4-ում կերամիկական սալիկների տեղադրման արժեքը /որը ներառում է նյութի արժեքը, աշխատուժը, ԱԱՀ և այլ հարակից ծախսերը/ նախահաշվային 11.8 հազ. դրամ արժեք ունենալու և կապալառուի կողմից 9.4 հազ. դրամ գնանշելու և պայմանագրում ամրագրելու պարագայում համեմատվում է զուտ այդ նյութի ձեռքբերման արժեքի հետ՝ 3.7 հազ. դրամ, իսկ այնուհետև հանվում է դրանց միջև տարբերություն, որպեսզի դրանով իսկ ստեղծել թույլ տրված խախտման պատկեր: Ի դեպ, կերամիկական սալիկների տեղադրման զուտ աշխատանքի շուկայական արժեքը կազմում է 4.0-5.0 հազ. դրամ:	
11	Ստուգմամբ պարզվել է, որ առկա է փաստաթղթային հիմնավորում չունեցող էական շեղումներ օբյեկտների փորձաքննություն անցած նախահաշիվների և ԾԻԳ-ի կողմից իրականացվող մրցույթներին ներկայացված ծավալաթերթերի ծավալների, աշխատանքների տեսակների, փաստաթղթային	Ակնհայտորեն աղավաղելով իրական փաստերը, հաշվետվության տվյալ դրվագում ներկայացված են որոշակի ծավալներ, որոնք իբրև թե հանդիսանում են խախտումներ: Այսպես, ըստ էության, տվյալ դեպքերում հիշատակվում են այն բոլոր դեպքերը, երբ պատվիրատուն <u>մինչև մրցույթի իրականացումը</u>, հայտնաբերելով կազմված նախահաշիվներում սխալներ և բացթողումներ, կատարել է դրանց ուղղումներ կամ իրականացրել է արժեքի նվազեցմանն ուղղված քայլեր և միայն դրանք	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա: ԾԻԳ-ը գործել է բացառապես իր իրավասությունների շրջանակում:

կառուցվածքի և բովանդակության միջև: Այսպես, փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված չեն, սակայն մրցույթի ծավալաթերթերում ավելացել են նոր ծավալներ. • Սպիտակ քաղաքի դատարանի շենքի ծավալաթերթում՝ 132 քմ հենապատ՝ 17,772.9 հազ. դրամ արժեքով: • Սևան քաղաքի դատարանի շենքի ծավալաթերթում՝ 191.5 քմ մետաղապլաստե փայտագույն պատուհաններ՝ 13,483.0 հազ. դրամ արժեքով, 93.5 քմ պատերի երեսապատում սրբատաշ բազալտե սալերով (50 մմ հաստությամբ)՝ 4,506.0 հազ. դրամ արժեքով:	ուղղելուց հետո մրցույթ է հայտարարել: Կարծում ենք <u>պատվիրատուի նման իրավասությունը անժխտելի է և մինչև մրցույթ հայտարարելու պահը նախահաշիվներում բոլոր հնարավոր սխալները /որոնք հայտնաբերվել են մինչև մրցույթը/, չուղղելը ուղղակի անթույլատրելի է:</u> Այնուամենայնիվ, հարկ ենք համարում անդրադառնալ հաշվետվությունում խախտման պատկեր ստեղծելու նպատակով ներկայացված դեպքերը. - <u>Սպիտակ քաղաքի դատարանի ծավալաթերթում՝</u> 132 քմ հենապատ 17,772.9 հազ. դրամ արժեքով նախահաշվային բաժինը ընդանրապես ներառված չի եղել ամփոփ նախահաշվի արժեքի մեջ: Այսինքն, եթե նշված ծավալը իրականում ներառված լիներ փորձաքննության անցած ամփոփ նախահաշվի արժեքի մեջ, ապա տվյալ օբյեկտի նախահաշիվը պետք է դիտարկել ոչ թե 507,265.81 հազ. դրամ, այլ այն պետք է կազմեր 17,772,9 հազ. դրամով ավել՝ 525,038.7 հազ. դրամ: Սակայն հաշվի առնելով այն փաստը, որ չնայած նման բաժին ներառված է եղել կապալի պայմանագրի արժեքի մեջ, իսկ փաստացի նման աշխատանքների իրականացումը չի պահանջվել, հետևաբար տվյալ գումարի չափով կապալառուի արժեքը ոչ թե ավելացվել, այլ ամբողջապես նվազեցվել է շինարարության ընթացքում; - <u>Սևան քաղաքի դատարանի ծավալաթերթում՝</u> 191.5 քմ մետաղապլաստե փայտագույն պատուհանները ոչ թե ավելացվել են, այլ մրցույթից առաջ դրանք նույն ծավալով և ճարտարապետական տեսքը պահպանելու համար նույն գույնով փոխարինվել են՝ սկզբնական նախահաշվում սահմանված 191.5 քմ ալյումինե փայտագույն պատուհանների փոխարեն: Նշվածը իրականացնելու նպատակն է՝ տնտեսել որոշակի միջոցներ /քանի որ ալյումինե պատուհանները ավելի թանկ են, քան մետաղապլաստե պատուհանները/, ինչի արդյունքում տեղի է ունեցել տնտեսում 2,839,00 հազ. դրամի չափով: Նույն կերպ տնտեսում ունենալու նպատակից ելնելով, կրկին <u>մինչև մրցույթի</u> իրականացումը 93,5 քմ, պատերի երեսապատում սրբատաշ բազալտե սրբատաշ քարերով (200մմ հաստությամբ) շարը փոխարինվել է շուկայական	
--	---	--

	- Արդարադատության դպրոցի համալիրի ծավալաթերթում՝ 961.1 քմ լամինատե հատակը փոխարինվել է 11,085.2 հազ. դրամով վինիլային հատակով: - Մեղրի քաղաքի դատարանի շենքի ծավալաթերթի «պատեր, հիմնակմախք» բաժնում ավելացվել են աշխատանքներ՝ 12,437.1 հազ. դրամ արժեքով:	ավելի էժան գին ունեցող՝ նույն ֆունկցիոնալ նշանակությունն ունեցող 93,5 քմ, պատերի երեսապատում սրբատաշ բազալտե սալերով (50մմ հաստությամբ), որի արդյունքում նույնպես տեղի է ունեցել տնտեսում: - Արդարադատության դպրոցի համալիրի ծավալաթերթում՝ կրկին <u>մրցույթ իրականացնելուց առաջ 961.1քմ լամինատե հատակը փոխարինվել է բարձրորակ վինիլային հատակով՝ դասավանդման համար նախատեսված բոլոր սենյակներում պատշաճ տեսակի հատակ ունենալու նպատակով /լամինատե հատակները ավելի աղմկոտ են և դրանց շահագործման ժամկետը մեծ մարդկային հոսքերի դեպքում շատ ավելի կարճ է/:</u> Սակայն հաշվետվությունում նման փոխարինումը ներկայացված է որպես խախտում /«հատակը փոխարինվել է 11,085.2 հազ. դրամով ավելի թանկ վինիլային հատակով»/: Այնինչ դիտավորությամբ կամ անփութության հետևանքով փոփոխության առարկան ներկայացվել է խիստ մասնակի և չի նշվում, որ <u>սկզբնական նախագծով լամինատե հատակներ իրականացնելու համար մինչ լամինատ տեղադրելը նաև պետք է տեղադրվի 20մմ. հաստությամբ նրբատախտակ /ըստ նախահաշվի դրա արժեքն է 13,433.64 հազ. դրամ/, որը տեխնոլոգիապես չի տեղադրվում վինիլե հատակների իրականացման պարագայում:</u> Արդյունքում <u>ոչ թե տեղի է ունեցել ծախսի ավելացում, այլ փոխարենը տեղի է ունեցել հատակների իրականացման գծով տնտեսում առնվազն 727.8 հազ դրամի չափով, միաժամանակ ապահովելով նաև այդ հատակների նպատակային նշանակության արդյունավետությունը:</u> Մեղրի քաղաքի դատարանի շենքի ծավալաթերթում՝ տվյալ դեպքում կրկին <u>մինչև մրցույթի իրականացումը «պատեր, հիմնակմախք»</u> բաժնում 12,437.1 հազ. դրամ արժեքով միաձուլ ծածկերի հենքերի կառուցման աշխատանքները մրցույթի ծավալաթերթում ավելացնելու մասին է: Ընդ որում, տվյալ դեպքում խոսքը վերաբերվում է շենքի 2-րդ և 3-րդ հարկերի միաձուլ ե/բետոնե միջհարկային հեծանների /հարկերի/ ծավալը նախահաշվից ի սպառ բացակայելու մասին: Այսինքն զուտ նախահաշվով մրցույթ հայտարարելու դեպքում պատվիրատուն	
--	---	--	--

		կատեղծեր իր համար մի անցանկալի իրավիճակ, երբ պայմանագրի արժեքից կբացակայեր ամբողջ շենքի 2-րդ և 3-րդ հարկերի միաձույլ ե/բետոնե ծածկերի ծավալները և պատվիրատուն ստիպված պետք է գնար շահող կապալառուի հետ արդեն իսկ վերջինիս կողմից ֆիքսված միավոր գներով նման բաց թողնված ծավալները ավելացնելու անցանկալի բանակցությունների՝ պայմանագրի արժեքը համապատասխանաբար ավելացնելու վերաբերյալ: <u>Ի դեպ, նշված ծավալները փորձաքննության անցած նախահաշվի արժեքի մեջ ներառված լինելու պարագայում տվյալ օբյեկտի նախահաշիվը պետք է դիտարկել ոչ թե 476,214.45 հազ. դրամ, այլ այն պետք է կազմեր մոտ 24,000.0 հազ. դրամով ավել՝ այսինքն մոտ 500,000.00 հազ. դրամ:</u>	
12	Փաստորեն, նախագծող կազմակերպությունների կողմից կազմած նախագծահաշվային փաստաթղթերում և ծավալաթերթերում առկա տարբերություններն ազդել են մրցույթի մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների ձևավորման և մրցութային հանձնաժողովների կողմից դրանց գնահատման վրա:	Ամփոփելով նախորդ կետում նշված բոլոր դեպքերը, հարկ է նշել, որ հաշվետվությունում անհիմն կերպով խախտման պատկեր ներկայացնելու նպատակով ողջամտությունից դուրս եզրահանգում է կատարված Ընթացիկ Հաշվետվության այս դրվագով: Այսպես, ստացվում է, որ եթե մրցույթից առաջ պատվիրատուն մրցութային փաստաթղթերում հայտնաբերել է լուրջ բացթողումներ, ապա դրանք պետք է անտեսվեն և այդ սխալներով և բացթողումներով հանդերձ պետք է իրականացվի մրցույթ: Իսկ մրցույթից հետո պատվիրատուն ստիպված պետք է մտնի շահող կապալառուի հետ բանակցությունների և պայմանագրի արժեքը արդեն ավելացնի վերջինիս գնանշված միավոր արժեքներով: Կարծում ենք ակնհայտ է, թե նման պարագայում ինչպիսի չարաշահումներ կարող են տեղի ունենալ: Օրինակ՝ կապալառուն իմանալով որ պատվիրատուն անխուսափելիորեն ստիպված է լինելու պատվիրել նաև շենքի 2-րդ և 3-րդ հարկերի միաձույլ ծածկերը, իր գնառաջարկում միաձույլ երկաթբետոնե ծածկի իրականացման միավոր արժեքը կսահմանի մի քանի անգամ ավելի թանկ, իսկ պատվիրատուն հետագայում ստիպված կլինի ընդունել այդ միավոր գներով հաշվարկները: Հավանաբար հենց այդպես էլ պետք է արվեր, որպեսզի այդ գործողությունները հաշվետվությունում չորակվեին որպես բացասական ազդեցություն ունեցող գործոն գնային «առաջարկների ձևավորման և մրցութային հանձնաժողովի կողմից դրանց գնահատման վրա»: Կարծում ենք նաև տվյալ դեպքում խնդիրը այնքան ակհայտ է, որ <u>նման բացթողումները մրցույթից առաջ տեսնել ու չներառելը և միայն հետագայում դրա շուրջ մրցույթը շահող կապալառուի հետ բաց</u>	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

		<u>թողնված ծավալի գնի շուրջ քննարկումներ իրականացնելը պարունակում է լուրջ և անկանխատեսելի գնագոյացման և կոռուպցիոն ռիսկեր, ինչից ուղղակի պետք է խուսափել վերը նշված եղանակով:</u>	
13	Մեղրի քաղաքի դատարանի շենքի կառուցման համար ԾԻԳ-ը «Մաստարա» ԱԿ հետ կնքել է նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմելու 03.07.2007թ. թիվ JR/PPF-C/008 պայմանագիր՝ 17,460.0 հազ. դրամի, որից հեղինակային հսկողության արժեք՝ 4,365.0 հազ. դրամ: «Մաստարա» ԱԿ կողմից նախագծված շինարարական օբյեկտի փորձաքննություն անցած նախահաշվային արժեքը կազմել է 476,214.5 հազ. դրամ (այդ թվում՝ ԱԱՀ), որը տեխնիկական ու հեղինակային հսկողության և չնախատեսված ծախսերի արժեքը գումարային՝ 24,706.6 հազ. դրամ, կամ տվյալ կապալի մրցույթի գնման առարկան կազմել է 451,507.9 հազ. դրամի շինարարական աշխատանքներ:	Կարծում ենք հաշվետվության տվյալ դրվագը ակնհայտորեն հուշում է այն մասին, որ Մեղրի քաղաքի դատարանի շենքի կառուցման համար նույն հաշվետվությունում որպես այսպես կոչված «կապալի մրցույթի գնման առարկա» հաշվետվության տարբեր մասերում հիշատակվում են տարբեր արժեքներ՝ տարբեր դրվագներում ըստ անհրաժեշտության այդ արժեքը հիմնավորելու նպատակով: Այսպես, նույն շենքի նախահաշվային արժեքը մի դեպքում նշվում է որպես 476,214.5 հազ. դրամ /տես հաշվետվության 9-րդ էջի 3-րդ պարբերությունը/, մյուս դեպքում այն կազմում է 409,131.7 հազ. դրամ /տես հաշվետվության աղյուսակ 3-ի 5-րդ տողը/, իսկ այնուհետև այլ դեպքում այդ արժեքը նշվում է արդեն որպես 451,507.9 հազ. դրամ /տես սույն դրվագը/: Այսինքն կիրառելով անհասկանալի և որևէ իրավական ակտով կամ պայմանագրով չկարգավորված կամայական հաշվարկներ, հաշվետվությունում տվյալ օբյեկտի արժեքը նշված է ըստ անհրաժեշտության: Փաստացի անտեսվել է այն հանգամանքը, որ տվյալ օբյեկտի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություն անցած ամփոփ նախահաշվային արժեքը կազմում է 476,214.5 հազ. դրամ, ինչի մասին առկա են անհրաժեշտ փաստաթղթերը: Ընդ որում նշված գումարը չի ներառում կես 11-ում նշված շուրջ 24,000.0 դրամ արժեքը, որը փաստացի չի հաշվարկվել ամփոփ նախահաշվում:	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:
14	Ստուգմամբ պարզվել է, որ շինարարական կապալի մրցույթի հրավերով, առանց նախագծանախահաշվային փաստաթղթերում փոփոխություններ կատարելու, ծավալաթերթում ներառվել են չնախատեսված և ծածկված աշխատանքների, որի համար մրցույթի մասնակիցները ներկայացրել են գնային առաջարկներ: Ծավալաթերթի՝ «Պատեր, հիմնակմախք» բաժինը լրացվել է նախագծով	Ներկայացված տեղեկությունները չեն արտացոլում իրական պատկերը և աղավաղում են փաստական տվյալները: Այսպես, իրականությունը պատշաճ չի մատուցված, այն ներկայացված է որպես աշխատանային ծավալների ուղղակի ավելացում, այլ ոչ թե նախագծանախահաշվային փաստաթղթերում հայտնաբերված և պարտադիր վերացման ենթակա սխալների ուղղում ԾԻԳ-ի կողմից: Մասնավորապես, իրականում օբյեկտի արժեքն ենթակա էր նվազեցման նախագծային փաստաթղթերով չնախատեսված, սակայն կապալառուի հաստատված ծավալաթերթի «Հիմքեր», «Պատեր, հիմնակմախք», «Տանիք», «Հատակներ», և «Հարդարում» բաժիններում ներառված 36,894.0 հազ. դրամի աշխատանքներով և <u>նույն բաժիններում ենթակա էր</u>	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

	նախատեսված, սակայն նախահաշվում չներառված 12,437.1 հազ. դրամի աշխատանքներով: Միաժամանակ, օբյեկտի նախահաշվային արժեքն ենթակա էր նվազեցման նախագծային փաստաթղթերով չնախատեսված, սակայն նախահաշվի և ծավալաթերթի «Հիմքեր», «Պատեր, հիմնակմախք», «Տանիք», «Հատակներ», և «Հարդարում» բաժիններում ներառված 30,073.5 հազ. դրամի աշխատանքներով:	համապատասխանաբար ավելացման 39,945.6 հազ. ՀՀ դրամի չափով աշխատանքներ կամ համադրության արդյունքում տարբերությունը կազմում է 3,051.5 հազ. ՀՀ դրամի չափով ավելացում: Հետևաբար, ներկայացված եզրահանգումը առանց նույն բաժիններով կատարված համապատասխան ավելացումների նշելու չի ներկայացնում իրական և ամբողջական պատկեր տվյալ հարցի շուրջ:	
15	Բացի այդ, նախագծողը նախահաշվով շենքի բացվացքներում հաշվի չի առել նախագծով նախատեսված «բացվող» կամ «չբացվող» հատկանիշը, և նախահաշվով 233 քմ ընդհանուր նկարագրով մետաղապլաստե պատուհանների համար հաշվարկել է հավելյալ 2,760.0 հազ. դրամ:	Չհիմնավորված հետևություն է կատարված նաև հաշվետվության տվյալ դրվագում՝ շենքի պատուհանների «բացվող» կամ «չբացվող» հատկանիշը չնշելու հետևանքով ինչ-որ հաշվարկներում մետաղապլաստե պատուհանների համար հավելյալ 2,760.0 հազ. դրամի վերաբերյալ: Նախ պետք է հիշատակել, որ նախագծային փաստաթղթերում և գծագրերում հստակ արտացոլված է շենքի որ պատուհանը ինչպես պետք է իրականացնել («բացվող» կամ «չբացվող» հատկանիշներով) և ցանկացած կապալառու պատուհանների իրականացման համար իր գնառաջարկը տալուց առաջնորդվում է ոչ թե ենթադրյալ հատկանիշների հաշվարկներով, այլ նախագծային փաստաթղթերի գծագրերում արտացոլված տվյալներով և մասնագրերով, որի պարագայում հավելյալ գումարի մասին հիշատակելը տեղին չէ: Նույն տրամաբանությամբ կարելի էր հետևություն անել, որ միաձույլ երկաթբետոն ծածկերում ըստ ամրանների տեսակների հատկանիշների ծավալները ծավալաթերթում հաշվի չառնելու պարագայում հավելյալ հաշվարկվել է “X” գումար, ինչը օրինակի համար՝ այդ ծածկում ներառված Ա1, Ա3 և այլ տեսակների ամրանների գնային տարբերությունն է:	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

16	Անցկացվող շինարարական կապալի մրցույթի համար նախագծով և մասնագրերով նախատեսված ամրանի և մետաղական կոնստրուկցիաների գները՝ որպես պայմանագրի փոփոխական գործոն, 2009 թվականին ԾԻԳ-ի պահանջով ենթակա էին գործող գներով վերանայման և նվազեցման 21,979.8 հազ. դրամի չափով, քանի որ դրանք նախահաշվով հաշվարկված էին ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն» ՊՈԱԿ-ի 2007 թվականի ապրիլ ամսվա ինֆորմացիոն տեղեկագրի գներով:	Ակնհայտ անարժանահավատ և փաստացի հորինված պահանջ պարունակող դրույթ է տվյալ դրվագում: Այսպես, առանց որևէ հիմնավորման կամ այդպիսի պահանջի համար կարգավորող փաստաթղթի վրա հղում կատարելու, ՀՀ վերահսկիչ պալատը անհայտ տրամաբանությամբ ամրագրել է, որ Մեղրի դատարանի շենքի պայմանագրով նախատեսված ամրանի և մետաղական կոնստրուկցիաների գները «2009 թվականին ԾԻԳ-ի պահանջով ենթակա էին գործող գներով վերանայման ու նվազեցման 21,979.8 հազ. դրամի չափով, քանի որ դրանք նախահաշվով հաշվարկված էին ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն» ՊՈԱԿ-ի 2007 թվականի ապրիլ ամսվա ինֆորմացիոն տեղեկագրի գներով»: Ընդ որում, սույն դրվագում, անհասկանալի է, դիտավորությամբ թե անփութության հետևանքով /հավանաբար գոյություն չունեցող իրավիճակը առավել լուրջ խախտման տեսքով ներկայացնելու միտումով/ նշվել է «2007 թվականը», այնինչ տվյալ օբյեկտի նախահաշիվը կազմվել է 2008 թվականի ապրիլ ամսին: Ի դեպ, նշված հարցը կարգավորվում է պայմանագրի 47.1 կետով, որտեղ հստակ սահմանված է, որ «որպես պայմանագրային գնի փոփոխման գործոն» մրցույթի արդյունքում կնքված պայմանագրի միավոր արժեքների ճշգրտում չի կարող կիրառվել: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ սույն դրվագով անհիմն կատարված հաշվարկի գումարները դիտարկվել են նաև տվյալ օբյեկտի մրցույթի ներկայացման այսպես կոչված «գնման առարկայի արժեքը» որոշելու նպատակով /տես մեր կետ 15-ում և հաշվետվության աղյուսակ 3-ում նշված նշված հաշվարկները/:	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:
17	Արդյունքում, «Մաստարա» ԱԿ կողմից Մեղրի քաղաքի դատարանի շենքի շինարարական կապալի 451,507.9 հազ. դրամ նախահաշվային արժեքը 42,376.2 դրամով /այդ թվում՝ ԱԱՀ/, գերազանցել է կապալի	Տվյալ եզրահանգումը և դրանում ներառված հաշվարկները անհիմն են: Այսպես, առանց որևէ հիմնավորման, մասնավորապես հաշվարկի հիմքում դնելով նախորդ կետի գոյություն չունեցող պահանջը, անտրամաբանական եզրահանգումներ կատարելով նաև ժամանակի մեջ /օրինակ՝ ըստ նախորդ կետի	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

	գնման առարկայի արժեքը: Շինարարական օբյեկտի նախամրցութային իրական արժեքը չորոշելու հետևանքով պատվիրատուն՝ ԾԻԳ-ը չի ապահովել Համաշխարհային բանկի գնումների ուղեցույցի 2.61-րդ կետի պահանջը՝ գնային առաջարկը չպետք է էական գերազանցի անհրաժեշտ բյուջեն:	պայմանագրի ընթացքում կատարվող ամրանի և մետաղական կոնստրուկցիաների գները՝ որպես պայմանագրի փոփոխական գործոն, պետք է փոփոխվեն պայմանագրի կատարման ընթացքում, / պայմանագրի արժեքը անհասկանալի եղանակով հաշվետվությունում փոփոխվեց արդեն մինչև տվյալ պայմանագրի համար անցկացվող մրցույթի «կապալի գնման առարկայի արժեքը» որոշելու համար: Միաժամանակ հենվելով վերը նշված անտրամաբանական հաշվարկների վրա, անհիմն եզրահանգում է կատարված «նախամրցութային իրական արժեքը չորոշելու» վերաբերյալ: Հարկ ենք համարում տեղեկացնել, որ կոնկրետ տվյալ դեպքում կապալի պայմանագրի համար երկու-երեք ամիս ժամանակահատվածում փաստացի իրականացվել է երկու իրար հաջորդող մրցույթներ, որոնց արդյունքում որոշվել է գնման առարկայի իրական արժեքը: Անդրադառնալով Համաշխարհային բանկի գնումների ուղեցույցի 2.61-րդ կետի պահանջին, հարկ ենք համարում նշել, որ տվյալ իրավական նորմի կատարման հետևող իրավասու անձ է հանդիսանում հենց Համաշխարհային բանկը և վերջինիս կողմից տվյալ մրցույթները պատշաճ հաստատվել են: Հետևաբար, տվյալ դեպքում հաշվետվությունում տեղ է գտել Համաշխարհային բանկի ուղեցույցների անհարկի հիշատակում:	
18	Դատարանի շենքի շինարարության անցկացված կապալի մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչել «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ գնային առաջարկը՝ 475,103.3 հազ. դրամ և կնքվել է 22.09.2009թ. թիվ JR2/W2/010-R պայմանագիր: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ծավալաթերթ նախահաշվում կատարված փոփոխությունների արդյունքում օբյեկտի արժեքը թանկացել է, և կատարողական ակտերով	Ակնհայտ անարժանահավատ դրույթ է արտացոլվել տվյալ դրվագում: Տեղեկացնենք, որ <u>նշվածը ակնհայտ սուտ է՝ բոլոր կատարված աշխատանքների համար պայմանագրով սահմանված կարգով, մինչև ցանկացած լրացուցիչ աշխատանքի իրականացումը պատվիրատուի, կապալառուի, տեխնիկական հսկիչի միջև կնքվել են պայմանագրով սահմանված ընթացակարգով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը /փոփոխման նախահաշվի համաձայնագրերը/, դրանք ստորագրվել են բոլոր նշված անձանց կողմից և վավերացվել են կնիքներով:</u> Ավելացնենք, որ տվյալ հարցի վերաբերյալ՝ ի պատասխան ՀՀ վերահսկիչ պալատից ստացված հարցման, պաշտոնական պարզաբանում է տրվել նաև ՀՀ արդարադատության	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

	առանց պայմանագրի համապատասխան փոփոխության կամ առանձին ընթացակարգերով լրացուցիչ համաձայնագրեր կնքելու, վերջնահաշվարկով կապալառուին վճարվել է 512,525.6 հազ. դրամ:	Նախարարության կողմից, որը սպառիչ կերպով ներկայացրել է տվյալ հարցի իրավական կարգավորման մեխանիզմները, համաձայնագիր կնքելու եղանակը: Այնուամենայնիվ, չնայած տրամադրված պարզաբանման և փաստացի բոլոր փաստաթղթերի առկայության, հաշվետվությունում կրկին ներառվել է այս դրույթը /տվյալ պայմանագրի շուրջ բոլոր փոփոխությունների վերաբերյալ համաձայնագրերի և հիմնավորող փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ վերահսկիչ պալատի հարցման և ՀՀ արդարադատության նախարարի պարզաբանման պատճենները առկա են ԾԻԳ-ում և կարող են տրամադրվել ցանկացած շահագրգիռ անձի առաջին իսկ պահանջով:	
19	ԾԻԳ-ը մրցույթի արդյունքով հաղթող ճանաչված «Փարվանապրոմ» ՍՊԸ հետ կնքել է ՀՀ արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոնի շենքի վերակառուցման 03.05.2010թ. թիվ JR/W2/104 պայմանագիր՝ 218,778.6 հազ. դրամ արժեքով: «Փարվանապրոմ» ՍՊԸ նախկինում ոչ պատշաճ կատարված աշխատանքների պատճառով ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով ընդգրկվել է լիազոր մարմնի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում: Պետության կարիքների համար բյուջետային միջոցների հաշվին կատարվող գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված անձի մասնակցությունը Համաշխարհային բանկի կողմից սահմանված գնումների կազմակերպման ուղեցույցով չի	Ակնհայտ խեղաթյուրված եղանակով է ներկայացված սույն դրվագում նշվածը: Այսպես, չնայած այն հանգամանքին, որ դրա մասին բազմիցս նշվել և ներկայացվել է բավարար փաստաթղթային ապացույցներ, այնուամենայնիվ նշված է, որ «Փարվանապրոմ» ՍՊԸ նախկինում ոչ պատշաճ կատարված աշխատանքների պատճառով ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով ընդգրկվել է լիազոր մարմնի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում: Այդ ամենին հետևում է որևէ իրավական ակտով նման պահանջ չունեցող և պատվիրատուին նման իրավասություններ չտվող, սակայն Ընթացիկ Հաշվետվությունում նշված զուտ բարի ցանկություն՝ լուծել տվյալ կազմակերպության հետ պայմանագիրը, քանի որ հայտնի է դարձել որ նույն կազմակերպությունը նախկինում ինչ-որ աշխատանք ոչ պատշաճ է իրականացրել: Սույն հարցի շուրջ իրականությունը բացահայտելու, այսինքն՝ փաստական տվյալները չկոծկելու և չխեղաթյուրելու համար կարծում ենք բավարար է միայն նշել, որ «Փարվանապրոմ» ՍՊԸ հետ պայմանագիրը կնքվել է 03.05.2010թ., ինչը հաջորդել է 16.04.2010թ. կայացած և նվազագույն գնառաջարկ ներկայացնելու արդյունքում մրցույթի	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

	սահմանափակվում: Սակայն, նույն ուղեցույցի համաձայն, եթե մասնակիցը գնման գործընթացում մինչև պայմանագիր կնքելը ներկայացրել է կեղծ տվյալներ և տեղեկություններ, ապա հայտը ենթակա է մերժման: Բացի այդ, ՀՀ գործող օրենսդրությամբ՝ այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունքունի միակողմանի լուծել պայմանագիրը: «Փարվանապրոմ» ՍՊԸ մրցութային հանձնաժողովից թաքցրել է մրցույթին նախորդող ժամանակահատվածում պետության կարիքների համար պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը, իսկ ԾԻԳ-ը իր լիազորությունների շրջանակներում այդ հանգամանքն ի հայտ գալուց հետո չի լուծել պայմանագիրը:	հաղթող ճանաչվելուց, կառավարման խորհրդի կողմից 23.04.2010թ. հաստատելուց հետո, իսկ ՀՀ ֆինանսների նախարարի հրամանը տվյալ կազմակերպությանը պետական գնումներին մասնակցելու իրավունքից զրկված կազմակերպությունների ցանկում ներառելու վերաբերյալ ուժի մեջ է մտել և հրապարակվել 25.06.2010թ. այն է՝ մրցույթը շնորհելու և պայմանագիրը կնքելուց հետո գրեթե 2 ամիս անց: Այս առումով բավականին հետաքրքիր է նաև ուշադրություն դարձնել հետևյալ փաստի վրա: Այսպես, Ընթացիկ Հաշվետվությունը տվյալ դրվագում միանգամայն ճիշտ է համարում ԾԻԳ-ին որոշակի օրենսդրությունից չբխող իրարամերժ /նույն է՝ կամայական/ իրավասություններ «շնորհել»: <u>Մասնավորապես, առաջարկվել է մրցույթին իբրև թե կեղծ տվյալներ և տեղեկություններ ներկայացրած «Փարվանապրոմ» ՍՊԸ հետ կնքված պայմանագիրը դրա իրականացման կեսից պետք է լուծվեր: Դրան հակառակ «Բաղրամյանշին» ԲԲԸ դեպքում /տես մեր պարզաբանումը 1-ին կետում / մրցութային հանձնաժողովի կողմից փաստացի արձանագրված կեղծիքի հայտնաբերման պարագայում պետք է մրցույթը շնորհվեր, քանի որ այդ կեղծիքները «էական ազդեցություն չունեցող ֆորմալ բնույթի անհամապատասխանություններ» են:</u> Այսինքն, նման տրամաբանությամբ կեղծ տվյալներ և տեղեկություններ ներկայացրած մի կապալառուի դեպքում արդեն իսկ կնքված պայմանագիրը պետք է լուծել, իսկ մեկ այլ կապալառուի դեպքում այդ փաստը պետք է համարել ոչ էական և կնքել պայմանագիրը, որպեսզի վարկային միջոցների օգտագործումը ՀՀ վերահսկիչ պալատի կողմից դիտարկվի արդյունավետ (տես Ընթացիկ Հաշվետվության 4-րդ էջի չորրորդ և հինգերորդ մասերում ամրագրված եզրահանգումը):	
20	«Փարվանապրոմ» ՍՊԸ-ն պայմանագրի շրջանակներում 2010 թվականի մայիսի 20-ից մինչև 2011 թվականի նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում կատարողական ակտերով կատարել է շինարարական աշխատանքներ՝ 228,705.0	Տվյալ պարագայում սխալ է նշված կողմերի միջև փոխհաշվարկների իրական պատկերը: Իրականում պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետը վաղուց ավարտվել է և խոսքը կարող է գնալ միայն կապալառուի հանդեպ կրեդիտորական պարտքի մասին: Այսպես, մինչ օրս ԾԻԳ-ը փաստացի չի վճարել կապալառուին որպես անորակ աշխատանք որակված աշխատանքների	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

	հազ. դրամ արժեքով, որը 9,926.4 հազ. դրամով գերազանցել է պայմանագրային արժեքը: Առ ստուգման պահը ԾԻԳ-ի կողմից վճարումը կազմել է 204,443.2 հազ. դրամ, կամ 24,261.8 հազ. դրամով պակաս, որից՝ պայմանագրով սահմանված շինարարության կատարման ժամկետի ուշացման համար հաշվանցված տույժ՝ 10,938.9 հազ. դրամ, վերջին՝ թիվ 16 կատարողական ակտից կրեդիտորական պարտք՝ 1,887.7 հազ. դրամ և պայմանագրով սահմանված երաշխիքային գումար՝ 11,435.2 հազ. դրամ:	հանրագումարը, քանի որ նշված գումարը վճարելու պահանջը կապալառուի կողմից մինչ օրս պատշաճ կազմված փաստաթղթերով չի ներկայացվել:	
21	ՀՀ արդարադատության նախարարի 08.12.2011թ. թիվ 206-Ա հրամանով ստեղծվել է հանձնաժողով, որի կազմած ակտով օբյեկտն ընդունվել է շահագործման վերապահումներով: Ստուգմամբ պարզվել է, որ ԾԻԳ-ի կողմից պայմանագրի 35.2 կետով սահմանված կարգով «Փարվանապրոմ» ՍՊԸ-ին թերությունները վերացնելու պահանջ չի ներկայացվել, ընկերությունը փաստացի չի գործել, հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունները վերացվել են անհայտ կատարողի ու ֆինանսավորման աղբյուրի միջոցով, ԾԻԳ-ը երաշխիքային գումարից միջոցներ չի ծախսել: Շենքի վերակառուցման ընթացքում կատարվել է 2,996.0 հազ. դրամի ասֆալտապատման աշխատանքներ: Ասֆալտապատման աշխատանքները կատարվել են առանց ենթակապալառու	Առանց որևէ լաբորատոր հետազոտություններ իրականացնելու /ինչը պարտադիր է նման տեսակի միանշանակ եզրահանգում կատարելու համար/, ինչպես նշվել է Ընթացիկ Հաշվետվությունում՝ «<u>տեղադրեսությամբ</u>» պարզվել է, որ իրականացված ասֆալտապատման աշխատանքները կատարված են «ՇՆԱԿ 3.06.03-85»-ով սահմանված <u>տեխնոլոգիական պահանջների խախտումներով, իսկ կատարված աշխատանքների որակի համապատասխանությունը ԳՈՍՏ 9128-84 պահանջներին տեխնիկական հսկողության կողմից չի հավաստվել:</u>» Ակնհայտ է, որ սույն դրույթը նունպես խեղաթյուրում է իրականությունը և փորձ է կատարում որոշակի խախտում վերագրել պատվիրատուին: Ընդ որում, տվյալ դեպքում փորձը կատարվում է պատվիրատուի հետ տեխնիկական հսկողություն իրականացրած կազմակերպությանը առանձնացնել, իսկ խախտումը վերագրել հենց պատվիրատուին: Տեղեկացնենք, որ <u>տվյալ օբյեկտի տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը պատշաճ ստորագրել, կնքել և վավերացրել է բոլոր աշխատանքների իրականացումը, այդ թվում նաև ասֆալտապատման աշխատանքների իրականացումը:</u> Նշված փաստը հնարավոր չէ ժխտել, քանզի բոլոր փաստաթղթերը առկա են և տրամադրված են եղել ՀՀ վերահսկիչ պալատին: Ակնհայտորեն խեղաթյուրված է նաև այն փաստը, որ «Փարվանապրոմ» ՍՊԸ կողմից 2,996.0 հազ. դրամը	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

ներգրավելու՝ «Փարվանապրոմ» ՍՊԸ կողմից, որը այդ աշխատանքի կատարման լիցենզիա չէր ներկայացրել: Ստուգման ընթացքում տեղատեսությունով պարզվել է, որ աշխատանքները կատարվել են անորակ՝ «ՇՆԱԿ 3.06.03-85»-ով սահմանված տեխնոլոգիական պահանջների խախտումներով, կատարված աշխատանքների որակի համապատասխանությունը ԳՈՍՏ 9128-84 պահանջներին տեխնիկական հսկողության կողմից չի հավաստվել: Արդյունքում, ասֆալտապատման աշխատանքները ենթակա են կրկնակի կատարման՝ օբյեկտի երաշխիքային գումարի հաշվին, իսկ վճարված 2.996.0 հազ. դրամը «Փարվանապրոմ. ՍՊԸ կողմից ենթակա է վերականգման պետական բյուջե:	և 11,435.2 հազ. դրամ գումարները պետք է վերադարձվեն պետական բյուջե: Իրականում այդ գումարների հանրագումարը հանդիսանում է կապալի պայմանագրով փաստացի կատարված աշխատանքների դիմաց ԾԻԳ-ի պարտքը կապալառուին, որի վճարման պահանջ կապալառուի կողմից շուրջ երկու տարի չի ներկայացվել վերջինիս ղեկավարության անհայտ գտնվելու պարագայում: Այսինքն՝ <u>այդ գումարները ենթակա չեն վերականգնման պետական բյուջե, քանի որ դրանք ընդանրապես չեն ծախսվել ԾԻԳ-ի կողմից:</u>	
--	---	--

22	Տեղատեղությամբ պարզվել է նաև, որ օբյեկտի ներքին և արտաքին հարդարման աշխատանքներում օգտագործվել են ցածրորակ շինարարական նյութեր՝ պատուհաններ, դռներ, հատակի և երեսպատման սալիկներ, լամինատ, ներկեր, լվացարաններ, էլեկտրասնուցման սարքեր և պարագաներ: Փաստորեն, ԾԻԳ-ի կողմից պետական գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված «Փարվանապրոմ» ՍՊԸ հետ կապալի պայմանագիրը չլուծելու հետևանքով վերակառուցված փորձագիտական կենտրոնը չի համապատասխանում Դատախրավական բարեփոխումների ծրագրի շրջանակներում կառուցված այլ օբյեկտների որակին՝ աշխատանքները կատարվել են ցածրորակ շինարարական նյութերով և թերություններով, որը վերացնելու համար անհրաժեշտ է պայմանագրով նախատեսված 11,435.2 հազ. դրամ երաշխիքային գումարի հաշվին կատարել լրացուցիչ աշխատանքներ:	<u>Առանց որևէ հիմնավորումների և փաստացի հաշվարկների /կամ հստակ նշումների/ եզրահանգում է կատարված արտաքին հարդարման աշխատանքներում ցածրորակ շինարարական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ՝ գումարային 11,435.2 հազ. դրամի չափով:</u> Կարծում ենք նման ճշտությամբ գումարային պահանջ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է նաև առնվազն ներկայացնել հաշվարկներ և անորակության բացահայտված դեպքերի կոնկրետ ծավալներ, կցելով դրա բացվածքը: Փաստացի տվյալ դեպքում նույնպես իրականությունը խեղաթյուրված է ենթադրյալ խախտում վերագրելու նպատակով:	Տվյալ դեպքում խախտում առկա չէ, քանի դեռ շահագործող հիմնարկը՝ ՀՀ ԱՆ փորձագիտական կենտրոնը երաշխիքային ժամկետում չի ներկայացրել որևէ թերությունների վերացման պահանջ, իսկ ՀՀ վերահսկիչ պալատը հստակ չի նշել անորակ գնահատված հաշվարկները, ծավալները և աշխատանքները: «Դատախրավական ԾԻԳ» ՊԸ 2013թ. ապրիլի 10.04.2013թ. գրավոր դիմել է ՀՀ վերահսկիչ պալատին՝ տրամադրել ըստ վերջինիս անորակ աշխատանքների ցանկը և ծավալները: Մինչ օր այդ գրության պատասխան ՀՀ վերահսկիչ պալատի կողմից չի ներկայացվել:
----	--	---	---

23	Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի՝ «Իրավական տեղեկատվության մատչելիության ընդարձակում և հանրային իրազեկության բարձրացում» բաղադրիչով նախատեսվել է ձեռք բերել տեղեկատվական տերմինալներ: Համաշխարհային բանկի կողմից հաստատված գնման պլանով նախատեսված տեղեկատվական տերմինալների տեխնիկական բնութագիրը ԾԻԳ-ը լրացրել է վճարային համակարգերով, և ծրագրի շրջանակներում JR2/DG1/001 և 31.01.2011թ. թիվ JR2/DG6/001 պայմանագրերով երկու խմբաքանակներով ձեռք է բերել 80 վճարային տեղեկատվական տերմինալ՝ 369,867.1 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Դատական մարմինները, ինչպես նաև ԾԻԳ-ը, իրենց վերապահված լիազորություններով և կանոնադրությամբ վճարահաշվարկային գործառնություններ իրականացնելու իրավասություն չունեն և չեն իրականացնում, դատական համակարգում տեղակայված պետական սեփականություն հանդիսացող այդ տերմինալները օգտագործվում են միայն որպես տեղեկատվական տերմինալ:	Տվյալ դրվագում ներկայացվել են չհիմնավորված եզրահանգումներ ԾԻԳ-ի կողմից իբրև թե իր իրավասություններից դուրս քայլեր, գործողություններ կատարելու և դրանք որպես խախտում վերագրելու միտումով: Հատկանշական է, որ հաշվետվությունում կարծում ենք միտումնավոր չի նշվել JR2/DG1/001 պայմանագրի կնքման ամսաթիվը (24.03.2009թ) այն պարագայում, որ JR2/DG6/001 պայմանագրի դեպքում այն հստակ նշվում է: Նման տեսակի «բացթողում» թույլ տալու միտումը շատ պարզ է՝ JR2/DG1/001 պայմանագիրը ինքնին դուրս է ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 24.01.2012թ. թիվ 2/10 որոշմամբ սահմանված իրավասությունների և հաշվետվության 2-րդ էջում որպես «վերահսկողության ընդգրկող ժամանակաշրջան» նշված ժամկետներից՝ «2010 թվականի հունվարի 1-ից մինչև սրուգման իրականացման ժամկետի ավարտը»: Սակայն տվյալ դեպքում այդ պայմանագիրը նշվել է առավել տպավորիչ խախտման պատկեր ներկայացնելու միտումով: Այնուամենայնիվ, անդրադառնալով տվյալ դրվագին, հարկ ենք համարում նշել, որ չնայած դրա մասին չի նշվում, սակայն բոլոր գնված ապրանքների մատակարարման պայմանագրերը կնքվել են միջազգային մրցակցային մրցույթներ իրականացնելու արդյունքում /իսկ որոշ դեպքերում՝ նաև կրկնակի, նախկինում չկայացած մրցույթների իրականացման արդյունքում/: <u>ԾԻԳ-ը տվյալ դեպքում գործել է բարեխղճորեն և խիստ իր իրավասությունների սահմաններում: Գնման գործընթացներում ներգրավված բոլոր մարմինները /կառավարման խորհուրդ, Համաշխարհային բանկ, դրամաշնորհ հատկացնողներ/ պատշաճ տեղեկացված են եղել գործընթացների վերաբերյալ և միայն վերջիններիս հետ համաձայնեցված կարգով է գնվել վճարային տերմինալներով հագեցված կրպակները՝ համաձայն նախապես համաձայնեցված տեխնիկական մասնագրերի և գնումների պլանի:</u> ՀՀ վերահսկիչ պալատը առանց ծրագրի կարգավորիչ և առաջնային կարգավորման փաստաթղթերի ուսումնասիրության անհիմն և անհարկի եզրահանգում է կատարել, որ ԾԻԳ-ը իբրև թե խախտում կատարելով ինքնուրույն որոշում է կայացրել տեղեկատվական կրպակները հագեցնել	
----	---	--	--

Ստուգմամբ պարզվել է, որ վճարային համակարգերով հագեցված տերմինալներ գնելու արդյունքում դատական համակարգի կարիքներին անհրաժեշտ յուրաքանչյուր տերմինալի համար ԾԻԳ-ը ծախսել է ստուգման ժամանակաշրջանում շուկայում առկա տեղեկատվական տերմինալների գնից (ներառյալ՝ բոլոր հարկերը և վճարները) առնվազն երկու անգամ ավելի գումար (աղյուսակ 5), կամ ոչ նպատակային և անարդյունավետ ծախսվել է 185,000.0 հազ. դրամ:	վճարումներ ընդունելու սարքավորումներով: Հարկ ենք համարում նշել, որ ի սկզբանե տեղեկատվական կրպակների գնումը նախատեսվում էր իրականացնել միայն հանրության համար «Արլիս» տեղեկատվական իրավական համակարգից իրավական ակտերը կրպակների միջոցով վերհանելու և տեղում այդ ակտերը տպագրելու համար: Տեղեկացնենք, որ ի հակառակ ՀՀ վերասկիչ պալատի կողմից նշվածի՝ <u>Համաշխարհային բանկի կողմից հաստատված գնումների պլանում դեռևս 2010թ. արդեն իսկ սահմանված է եղել վճարային սարքավորումներով հագեցված կրպակների գնում /տես ՀԲ-ի ինտերնետային կայքում հրապարակված ծրագրի գնումների պլանի 37-րդ տողում ամրագրվածը՝ «ARLIS public information kiosk terminals with touch screen monitors and related vending hardware for public access in courts»</u> (Իդեալ՝ «vending hardware» անգլերենից թարգմանաբար նշանակում է վճարա-առևրային սարքավորում): Հետագայում լրացուցիչ հանրային ծառայությունների զարգացմանը զուգընթաց («Դատալեքս», «Մալբրի», «E-Payments.am», ԴԱՀԿ տեղեկատվական համակարգերի ստեղծում և զարգացում) խնդիր է առաջացել նաև այդ համակարգերից տվյալներ տպագրելու, իսկ որոշ դեպքերում նաև հանրային ծառայությունների դիմաց և պետական տուրքերի /օրինակ՝ դատական ծախսեր/ համար վճարներ կատարելուն: Նշված խնդիրը ՀՀ օրենսդրության սահմաններում լուծելու համար դեռևս 2010թ. սկսած գնված կրպակ-տերմինալների զգալի մասը (30 միավոր) վերջինիս կողմից ինքնուրույն սպասարկելու և դրանցով նաև պետական վճարներ ընդունելու համար հանձնված են «Տելսել» ընկերությանը, որն էլ իրականացնում է այդ կրպակների սպասարկումը: Վերջինս ունի համապատասխան վճարահաշվային գործունեություն իրականացնելու լիցենզիա և ընդունում է վճարներ: Բացի դրանից, գնված կրպակ-տերմինալներից 16 միավորը հանձնված է ԴԱՀԿ ծառայությանը՝ իր տարածքային ստորաբաժանումներում և սահմանային կետերում ԴԱՀԿ կողմից պարտապաններից գանձվող վճարները ընդունելու համար, իսկ մնացած կրպակները հանրությանը մատուցում են անհրաժեշտ տեղեկատվություն Հայաստանի բոլոր մարզերի համապատասխան հանրային վայրերում: Հետևաբար <u>ՀՀ վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունում, ինչպես նաև վերջինիս</u>	
---	---	--

	<u>ինտերնետային կայքում հրապարակված տարեկան հաշվետվության տվյալ դրվագի մասով նշվածը պարզապես չի համապատասխանում իրականությանը:</u> Իրական պատկերը առավել տպավորիչ ներկայացնելու համար /կարծում ենք տեղեկատվությունը խեղաթյուրելու նպատակով/ հաշվետվությունում ներկայացված է Աղյուսակ 5-ը, որով իբրև թե կատարվել է կրպակների գնման արժեքների համեմատություն: Սակայն նման համեմատություն կատարելիս ընդհանրապես հաշվի չի առնվել ինչը ինչի հետ են համեմատել՝ <u>աղյուսակում նշված կրպակների մասնագրերը շատ հեռու են գնված կրպակների մասնագրերից:</u> Նման անտրամաբանական համեմատությունը և դրա արդյունքում չհիմնավորված եզրահանգումները փարատելու համար ԾԻԳ-ի կողմից հենց Աղյուսակ 5-ում նշված Ռուսաստանի Դաշնության տարածքում գործող ինտերնետային կայքատերերին սույն թվականի մարտ ամսին գնանշման հարցում է կատարվել՝ նույն քանակի և դեռևս 2009-2010 թթ. կազմած միանգամայն նույն տեխնիկական մասնագրերով /բացառությամբ ծրագրային ապահովման պահանջի/ կրպակներ մատակարարելու վերաբերյալ: Արդյունքում նշված կազմակերպություններից մեկը ընդհանրապես հրաժարվել է մատակարարել որևէ մեկին, եթե գնորդը ՌԴ ռեզիդենտ չէ, իսկ <u>մնացած 3 տվել են իրենց գնառաջարկները ՌԴ-ի տարածքում մատակարարման պայմանով, ինչը մի քանի անգամ թանկ է, քան Աղյուսակ 5-ում նշված բազային մոդել հանդիսացող ինչ-որ կրպակների գները:</u> Ընդ որում, այդ գնառաջարկները պարունակել են նաև որոշակի վերապահումներ տեխնիկական մասնագրերին ամբողջապես չհամապատասխանելու, խստացված կանխավճարային եղանակով վճարումների պայմանների վերաբերյալ: Ավելին, մեր կողմից սահմանված և Համաշխարհային բանկի կողմից պահանջվող առնվազն 3 տարվա երաշխիքային սպասարկման պահանջը բավարարելու դեպքում մատակարարները պահանջել են ներկայացված գնառաջարկի նկատմամբ կիրառել լրացուցիչ 80% հավելավճար: Մեր կողմից իրականացված մոնիթորինգի և հարցումների արդյունքները առկա են ԾԻԳ-ում և կարող են տրամադրվել ցանկացած շահագրգիռ անձի	
--	--	--

		պահանջով: <u>Ամփոփելով վերը նշվածը, տեղեկացնենք նաև, որ քննարկվող բոլոր կրպակների գնումը ֆինանսավորվել է բացառապես Հոլանդական դրամաշնորհի միջոցներից և որևէ գումար այդ կրպակները գնելու համար Հայաստանի Հանրապետության կողմից չի հատկացվել:</u> Նշված նպատակի համար դրամաշնորհի հատկացրած պետության պաշտոնական ներկայացուցիչները, ինչպես սնան ՀԲ-ը գնահատել են այդ ծրագիրը արդյունավետ և որպես տարածաշրջանում իրականացված հանրային ծառայությունների մատուցման լավագույն փորձ:	
24	Մարզային դատարանների և Արդարադատության դպրոցի համալիրի կարիքների համար ԾԻԳ-ը «Della Valentina Office» իտալական կազմակերպության հետ կնքել է կահույքի ձեռք բերման 26.01.2011թ. թիվ JR2/G2/007-01 և 25.11.2011թ. JR2/G3/001 պայմանագիր, համապատասխանաբար՝ 288,996.0 եվրո և 212,968.0 եվրո արժեքով: Ստուգման ժամանակաշրջանի շուկայի գների դիտարկումով պարզվել է. • ԾԻԳ-ը ձեռք է բերել 830 «այցելուների համար աթոռ»՝ միավորի արժեքը 33.9 հազ. դրամով այն դեպքում, երբ նույն տեխնիկական բնութագիր ունեցող այդ ապրանքատեսակի շուկայական մանրածախ գինը կազմում է 12.0 հազ. դրամից մինչև 15.0 հազ. դրամ: Արդյունքում, ձեռք բերված աթոռների արժեքի տարբերության հաշվին ԾԻԳ-ը կատարել է առնվազն 15,687.0 հազ. դրամի	Տվյալ դրվագում ներկայացվել է անհիմն եզրահանգում երկու պայմանագրերով աթոռներ գնելու վերաբերյալ: Կրկին որևէ կերպ չի հիշատակվում այն փաստը, որ տվյալ պայմանագրերը նույնպես կնքվել են բացառապես միջազգային մրցույթի արդյունքում, որի փաստաթղթերը նախապես հաստատվել են իրավասու մարմինների կողմից: Մրցույթից հետո արդյունքները նույնպես հաստատվել են նույն իրավասու մարմինների կողմից: Անհասկանալի տրամաբանությամբ մոտ 38 ապրանքատեսակ ունեցող պայմանագրից դիտարկվել է բացառապես երկու տեսակի աթոռներ, որին նաև հետևել է ենթադրությունների և ցանկությունների վրա հիմնված աղավաղված եզրահանգում Համաշխարհային բանկի գնման ուղեցույցների պահանջների հակառակ այդ գնումը պետք էր կազմակերպել անպայման առանձին լոտեր կազմակերպել բոլոր 38 ապրանքատեսակների համար: Հատկանշական է նաև այն փաստը, որ չնայած նախորդ առարկություններով և բացատրություններով պարզաբանվել էր, որ 188 «աշխատանքային աթոռ»-ի գնման միավոր արժեքը ոչ թե 106.2 հազ. դրամ է /ինչը վրիպակով ամրագրված է շահառուներին հանձնելու ակտում միայն/, այլ ընդամենը համարժեք է 63,12 հազ. դրամի, որն էլ հանդիսանում է գնման արժեք մաքսագերծման ծախսերը կատարելուց առաջ: Հարկ ենք համարում նաև նշել, որ <u>ՀՀ վերահսկիչ պալատի գնային համեմատությունները չունեն որևէ փաստաթղթավորված հիմքեր մեր կողմից գնված աթոռներին համարժեք որակի, ստանդարտների և չափորոշիչների աթոռների հետ համեմատություն կատարելու համար:</u>	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

	անարդյունավետ ծախս: ԾԻԳ-ը ձեռք է բերել 188 «աշխատանքային աթոռ»՝ միավորի արժեքը 106.2 հազ. դրամով այն դեպքում, երբ նույն տեխնիկական բնութագիր ունեցող այդ ապրանքնատեսակի շուկայական մանրածախ գինը կազմում է 30.0 հազ. դրամից մինչև 38.0 հազ. դրամ: Արդյունքում, ձեռք բեռված աթոռների տարբերության հաշվին ԾԻԳ-Ը կատարել է առնվազն 12,821.6 հազ. դրամի անարդյունավետ ծախս: Փաստորեն, ԾԻԳ-ի կողմից շուկայի չուսումնասիրելու և աթոռների գնումը առանձին լոտով չիրականացնելու հետևանքով ծրագրի շրջանակներում աթոռները գնվել են 2.5-3 անգամ թանկ և անարդյունավետ ծախսվել է 28,508.6 հազ. դրամ:	Այլ կերպ ասած՝ անհայտ ծագում ունեցող, անհայտ արտադրողների առանց որևէ սերտիֆիկատների և ստանդարտների համապատասխանության Երևանի «Արգավանդ» կահույքի շուկայում անորակ աթոռների գները համեմատվել են իտալական արտադրության, որակի բոլոր սերտիֆիկատներով հավաստված աթոռների արժեքների հետ: Ընդ որում, մեր կողմից տվյալ դեպքում նույնպես հարցում է կատարվել մեկ այլ օֆիսային կահույք արտադրող խոշոր իտալական գործարանի և վերջինիցս ստացվել է մեր պայմանագրում ամրագրված գներից ոչ էական շեղումներ պարունակող գնառաջարկ, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է նման գնային համեմատություններ և եզրահանգումներ կատարելու չհիմնավորված լինելու փաստը:	
25	ԾԻԳ-ի կողմից «Դատական գլոբալ ցանցի կազմակերպման տեխնիկատնտեսական հիմնավորում, դատական համակարգում շահագործվող ծրագրային ապահովման միջոցների կարիքների գնահատում, ԴԱՀ ծրագրի ֆունկցիոնալության ընդլայնում» ծրագրի կատարման ծախսը կազմել՝ 726.7 հազ. եվրո /համարժեք է 360,000,0 հազ. դրամի/, որից պայմանագրի արժեք՝ 545.0 հազ. եվրո, ԱԱՀ և ոչ ռեզիդենտի շահութահարկ՝ 181.7 հազ. եվրո: ԾԻԳ-ը ծրագիրը իրականացրել է «Supermatech Soluteons INC» (ԱՄՆ) և «Մեյսիս ինֆորմեյշն	Կրկին առանց մրցույթի պայմանները և դրա գործընթացը հիշատակելու, փաստացի մրցույթում ներկայացված գնառաջարկները վերհանելու և վերլուծելու, ուղղակի՝ առանց լրացուցիչ մեկնաբանությունների ակնհայտորեն իբրև թե լուրջ խախտումներ ամրագրելու նպատակով, կատարված են անհիմն եզրահանգումներ: Այսպես, եզրահանգում է կատարված, որ երկու մասնակիցներից բաղկացած կոնսորցիումի անդամները իրավունք չունեն կամ չպետք է ներգրավելին իրենց կամ երրորդ անձանց մոտ աշխատող կամ ընդհանրապես ազատ սկզբունքով աշխատող մասնագետների՝ ծրագիրը իրականացնելու համար: Ընդ որում, առանց որևէ հիմնավորումների և նույնիսկ տեսականորեն նման հասկացությունների առաջացման հնարավորության եզրահանգում է կատարված այսպես կոչվող «ծևական» կոնսորցիումի, ծրագրի ղեկավարի ու կատարողների մասով «սխալ» տեղեկություններ	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

սիստեմ» ՍՊԸ կոնսորցիումի հետ կնքած 09.09.2009թ. թիվ JR/DC1/001 պայմանագրով: Մրցութային առաջարկով կոնսորցիումի կողմից ծրագրի կատարման համար որպես հիմնական աշխատակազմ՝ ծրագրի ղեկավար և ծրագրավորողներ, ներկայացվել է «Մեյսիս ինֆորմեյշն սիստեմ» ՍՊԸ հինգ աշխատող, որոնց մասնագիտական փորձը մրցութային հանձնաժողովի կողմից գնահատելու արդյունքում կոնսորցիումը ճանաչվել է հաղթող: ԾԻԳ-ը 2010 թվականին պայմանագրով սահմանված 545.0 հազ. եվրոն ամբողջությամբ փոխանցվել է «Supermatech Soluteons INC»: Ստուգմամբ պարզվել է, որ «Մեյսիս ինֆորմեյշն սիստեմ» ՍՊԸ-ն պայմանագրի շրջանակներում գումար չի ստացել, ծախսեր չի կատարել, ծրագրի կատարման համար ընկերության կողմից աշխատուժ չի ներգրավել և աշխատողներին չի վարձատրել: Փաստորեն, մրցութի մասնագիտական որակավորման պայմաններին բավարարելու նպատակով «Supermatech Soluteons INC» կազմել է ձևական կոնսորցիում, և ծրագրի ղեկավարի ու կատարողների վերաբերյալ ներակայացնելով սխալ	ներկայացնելու վերաբերյալ: Հարկ ենք համարում հստակ նշել, որ թե մրցութային հանձնաժողովը և թե Համաշխարհային Բանկը, որոնք պարտավորված են նման գործառույթ կատարելու, ուշադիր ուսումնասիրել է ՀՀ վերահսկիչ պալատի որակմամբ «<u>ձևական կոնսորցիում</u>»-ը և հաստատել է «սխալ» տեղեկություններով մրցութային առաջարկը, ինչը կատարվել է Համաշխարհային բանկի խորհրդատուների ընտրության ուղեցույցների բոլոր պահանջների խստիվ պահպանմամբ և չի պարունակում որևէ խախտում: Կնքված պայմանագրի պահանջներից ելնելով և Համաշխարհային բանկի կողմից սահմանված պահանջների խիստ պահպանմամբ տվյալ պայմանագրի ամբողջ գումարը՝ 545.0 հազ . եվրոի չափով աշխատանքի արդյունքի ընդունման դիմաց կարող էր և պետք է փոխանցվեր բացառապես «Supermatech Soluteons INC»-ը: Այլ կերպ վարվելը կհանգեցներ իրապես լիանգեցներ խախտման առաջացման: Ընդ որում, հաշվետվությունում հիշատակված բոլոր պայմանագրերը կնքված են եղել ՀԲ-ի հաստատած “Lump-Sum”, այսինքն՝ վճարում կատարված արդյունքի դիմաց սկզբունքով, առանց աշխատուժի կամ կատարված ծախսերի հիմնավորումների: Հետևաբար, «ՀՀ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 19-րդ հոդվածների պահանջների խախտմամբ հանդիպակած ստուգում իրականացնելու, այսինքն՝ ինչպես հիշատակված է օրենքով, տվյալ գործարքի հետ ուղղակի կապ չունեցող երրորդ անձանց կնքված գործարքների, այդ թվում՝ աշխատակիցների աշխատավարձը վճարելու կամ չվճարելու հետ կապված ստուգումներ կատարելու արդյունքում, իբրև թե լուրջ խախտման որակումով եզրահանագումներ է կատարված «սխալ» հաշվետվություններ ընդունելու և դրանց դիմաց վճարումներ կատարելու վերաբերյալ: Տեղեկության համար նշենք նաև այն փաստը, որը չնայած պատշաճ ներկայացվել էր, սակայն կրկին	
--	--	--

	տեղեկություններով մրցույթում ճանաչվել է հաղթող:	դիտավորությամբ հաշվի չեն առնված իրական տվյալները: Մասնավորապես, հաշվի չի առնված այն փաստը, որ ՀՀ դատական դեպարտամենտի մոտ 800 աշխատակից անցել է նոր ծրագրով աշխատելու համապատասխան ուսուցում և բոլոր անձանց ստորագրություններով ուսուցման հավաստագրերը առկա են ԾԻԳ-ում: Նմանատիպ եզրահանգում է կատարված նաև էլեկտրոնային արխիվի մշակման ծրագրի վերաբերյալ, չնայած այն հանգամանքին, որ ծրագրի գնումը կատարվել է պատշաճ՝ սահմանված կարգով և շահագործող շահառուն՝ ՀՀ դատական դեպարտամենտը նույնպես պատշաճ հաստատել է ծրագիրը ընդունելու վերաբերյալ: <u>Այսպես տվյալ միջազգային մրցույթի իրականացման արդյունքում կարճ ցուցակում ներգրավված և 6 տարբեր երկրներ ներկայացնող խորհրդատվական կազմակերպություններից գնառաջարկներ ներկայացվել է միայն երկուսի կողմից: Բացի պայմանագիրը կատարողներից մրցութային գնառաջարկ էր ներկայացվել «European Dynamics», Հունաստան կազմակերպության կողմից: Ընդ որում, այդ գնառաջարկը նույն աշխատանքը իրականացնելու համար ներկայացվել է 945,000 հազ. եվրո չափով՝ փաստացի ծախսված 545,000 եվրոյի գումարի դիմաց, ինչը 100% ֆինանսավորվել է բազառապես Հոլանդական դրամաշնորհի միջոցներից:</u> Ամփոփելով վերը նշվածը, ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվությունում ներկայացված եզրահանգումների տրամաբանությամբ հավանաբար տվյալ ծրագիրը արդյունավետ համարելու համար տվյալ պայմանագիրը պետք է կնքվեր «European Dynamics», Հունաստան հետ գրեթե կրկնակի արժեքով:	
26	«էլեկտրոնային արխիվավարման ծրագրային համակարգի մշակում» ծրագրի կատարման ծախսը կազմել է 293.0 հազ. ԱՄՆ դոլար (համարժեք է 106,000.0 հազ. դրամի), որից պայմանագրի արժեք՝ 219.8 հազ. ԱՄՆ դոլար, ԱԱՀ և ոչ ռեզիդենտի շահութահարկ՝ 73.2 հազ. ԱՄՆ դոլար: ԾԻԳ-ը ծրագիրը իրականացրել է «Supermatech Soluteons INC» հետ կնքած 25.01.2011թ. թիվ JR/DC1/003 պայմանագրով:	Ի լրումն նախորդ կետում նշվածի՝ նմանատիպ մոտեցում է ցուցաբերած նաև տվյալ դրվագում: Տվյալ դեպքում նույնպես պայմանագրի կնքմանը նախորդել է միջազգային մրցույթ, որի արդյունքները հաստատել են Համաշխարհային բանկի կողմից: Տվյալ դրվագում, անտեսելով այն փաստը, որ առաջադրանքը պատշաճ կատարված և ընդունված է դրա շահագործող մարմնի՝ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից, անհիմն եզրակացություն է կատարված «սխալ» հաշվետվություններ ընդունելու վերաբերյալ: Կրկին հարկ ենք համարում նշել, որ որևէ արգելք մրցույթի որակավորման նպատակով ցանկացած կազմակերպության մասնագետներ ներկայացնելու առումով չի կարող դիտարկվել սխալ: Բնականաբար,	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

Ստուգմամբ պարզվել է, որ «Supermatech Soluteons INC» մրցույթի հրավերով նախատեսված որակավորման պայմաններին բավարարելու նպատակով մրցութային հայտում ներկայացրել է սխալ տեղեկություն՝ որպես ծրագրի ղեկավար և ծրագրավորողներ ներառել է «Մեյսիս ինֆորմեյշն սիստեմս» ՍՊԸ-ի յոթ աշխատողների, որոնք ծրագրի իրականացման ընթացքում աշխատանքներ չեն կատարել: Մրցութային հանձնաժողովը չի հայտնաբերել սխալը և հաղթող է ճանաչել «Supermatech Soluteons INC»: Պայմանագրի կատարողական հաշվետվություններով «Supermatech Soluteons INC» որպես աշխատանքների կատարողներ ներկայացրել է ծրագրի իրականացմանը մասնակցություն չունեցող «Մեյսիս ինֆորմեյշն սիստեմս» ՍՊԸ նույն աշխատողներին և դրանց աշխատաձախսը: Արդյունքում ստացվել է, որ պայմանագիրը կատարվել է առանց ծրագրի ղեկավարի և ծրագրավորողների՝ «Supermatech Soluteons INC» կողմից պայմանագրում ներկայացված ֆինանսական կորդինատորի, փորձագետ խորհրդատուի և սպասարկող անձանակազմի միջոցով, իսկ ԾԻԳ-ը ընդունել է ներկայացրած սխալ կատարողական հաշվետվությունները և «Supermatech Soluteons INC» փոխանցել է պայմանագրով սահմանված 219.8 հազ. ԱՄՆ դոլար:	մրցութային հանձնաժողովը և Համաշխարհային բանկը ՀՀ վերահսկիչ պալատի մոտեցումը նման «սխալ»-ի առումով չի կարող ընդունելի համարել, քանզի դա հակասում է Համաշխարհային բանկի կողմից սահմանված խորհրդատուների ընտրության ուղեցույցների պահանջներին՝ որակավորման նպատակով ներգրավել ցանկացած մասնագետի: Ավելին, խորհրդատու կազմակերպությունների կողմից նման եղանակով մրցույթի մասնակցելու սահմանափակումներ գոյություն չունեն նաև ՀՀ ներքին օրենսդրությամբ: Հետևաբար, ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվությունում որպես «սխալ» որակված ընթացակարգը անհիմն է և հանդիսանում է մտացածին խախտում: Ի լրումն վերը նշվածի՝ ԾԻԳ-ը վճարումներ է կատարել աշխատանքի արդյունքի դիմաց, ինպես դա սահմանված է պայմանագրում, այլ ոչ թե ինչ-որ աշխատակիցների ներգրավման կամ դրանց աշխատանքի դիմաց վճարման կամ չվճարման փաստի դիմաց: Պայմանագրի որևէ դրույթ նման կարգով վճարումներ կատարելու պահանջ չի սահմանում և ՀՀ վերահսկիչ պալատի եզրահանգումները տվյալ պարագայում անհիմն են:	
--	--	--

27	Արդյունքում, հնարավոր չէ որոշել անհայտ կատարողներով «Դատական գլոբալ ցանցի կազմակերպման տեխնիկատնտեսական հիմնավորում, դատական համակարգում շահագործվող ծրագրային ապահովման միջոցների կարիքների գնահատում, ԴԱՀ ծրագրի ֆունկցիոնալության ընդլայնում» և JR2/DC1/001 և JR/DC1/003 պայմանագրերով ծրագրերի իրականացման համար ԾԻԳ-ի կողմից կատարված ծախսերի հիմնավորվածությունը և արդյունավետությունը:	Առավել հետաքրքիր և մտահոգիչ է հաշվետվության տվյալ դրվագում ամրագրվածը այն մասին, որ ծրագիրը շահագործող ՀՀ դատական դեպարտամենտի կողմից պատշաճ ընդունված և արդեն իսկ շուրջ 3 տարի հանրապետության բոլոր դատարաններում գործող դատական գործերի կառավարման և վարչարարության ծրագրային ամբողջական համակարգը, որը մասսամբ հանրությանը առավել հայտնի է www.datalex.am ինտերնետային կայքով և առանց որի ներկայումս հնարավոր չէ իրականացնել որևէ դատական ներքին գործառույթ, ՀՀ վերահսկիչ պալատի կողմից գնահատվել է որպես անհայտ կատարողներով կատարված ինչ-որ աշխատանք և որի արդյունավետությունը հնարավոր չէ որոշել Ին վերաբերվում է տվյալ պայմանագրերով ծրագրերի կատարողներին, ապա այդ պայմանագրերով հստակ սահմանված են կատարողները՝ մի դեպքում դա «Suprtmatech Solutions INC» (ԱՄՆ) և «Մեյսիս ինֆորմեյշնլ սիստեմս» ՍՊԸ կոնսորցիումն է, իսկ մյուս դեպքում «Suprtmatech Solutions INC» (ԱՄՆ):	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:
28	ԾԻԳ-ի և «Հելիքս Կոնսալթինգ» ՍՊԸ միջև կնքվել է 12.01.2012թ. թիվ JR2/DG6/003 պայմանագիր՝ 15,000.0 հազ. դրամ արժեքով (ներառյալ՝ ԱԱՀ): Պայմանագրով «Հելիքս Կոնսալթինգ» ՍՊԸ պարտավորվել է մշակել «Պետական տուրքերի և պետության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց այլ վճարների էլեկտրոնային վճարման միասնական համակարգ»: Ստուգմամբ պարզվել է, որ ԾԻԳ-ը պայմանագրի արժեքը՝ 15,000.0 հազ. դրամ (այդ թվում՝ ԱԱՀ), ամբողջությամբ փոխանցել է «Հելիքս Կոնսալթինգ» ՍՊԸ: Ըստ «Հելիքս Կոնսալթինգ» ՍՊԸ կողմից ներկայացված, հարկային մարմնի կողմից համարակալված 10.04.2012թ. թիվ 000037	Չհիմնավորված է սույն դրվագում կատարված եզրահանգումը, որ «Հելիքս Կոնսալթինգ» ՍՊԸ-ին www.e-payments.am համակարգի իրականացման համար 2,500 հազ. դրամ գումարը ավել է վճարվել և այն ենթակա է վերականգնման պետական բյուջե: Այսպես, զուտ ենթադրությունների վրա է հիմնված տվյալ եզրահանգումը: Այսպես, տվյալ մրցույթով «Հելիքս Կոնսալթինգ» ՍՊԸ կողմից առաջադրանքը կատարելու համար գնառաջարկ է ներկայացվել 15,000.0 հազ. դրամ, որը ըստ մրցույթի պայմանների պետք է ներառի բոլոր տեսակի հարկերը: Հանդիսանալով ԱԱՀ չվճարող կազմակերպություն, բնականաբար «Հելիքս Կոնսալթինգ» ՍՊԸ իր առաջարկը ներկայացրել է հենց այդ նույն տրամաբանությամբ, որ վերջինիս կողմից առաջարկված պայմանագրի գինը կազմում է 15,000.0 հազ. դրամ /ներառյալ բոլոր կիրառելի տեղական հարկերը, այդ թվում՝ ԱԱՀ-ն, եթե դա կիրառելի է/ որոնք կարող են առաջանալ պայմանագրի իրականացման արդյունքում: <u>Համաշխարհային բանկի գնման ստանդարտացված փաստաթղթերի պահանջներից էլնելով այս գործընթացը սովորաբար կիրառվող եղանակ է և այստեղ որևէ արտարոց իրավիճակ չի</u>	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

	հաշիվ ապրանքագրի՝ ընկերությունը ավելացված արժեքի հարկ վճարող չէ: Փաստորեն, ԾԻԳ-ը ընկերությանը պետք է վճարեր 12,500.0 հազ. դրամ, կամ ավելացված արժեքի հարկի չափով ստացած գումարը՝ 2,500.0 հազ. դրամ, «Հելիքս Կոնսալթինգ» ՍՊԸ կողմից ենթակա է վերականգնման պետական բյուջե:	<u>ստեղծում, բանզի պատվիրատուի համար ներկայացված ապրանքի գնառաջարկը պետք է ներառի ԾԻԳ-ի համար կիրառելի բոլոր ծախսերը, իսկ ներկայացված գնառաջարկից բխող հարկերի վճարման պարտավորությունը հանդիսանում է մրցույթի մասնակցի պարտականությունը:</u> Հետևաբար, տվյալ կազմակերպության գործարքի նկատմամբ ԱԱՀ կիրառելու պարագայում պայմանագրի արժեքը կլիներ արդեն 18,000.0 հազ. ՀՀ դրամ: Փաստորեն «Հելիքս Կոնսալթինգ» ՍՊԸ կողմից ներկայացված հաշիվ-պահանջագիրը կազմվել է այն նույն գումարի չափով, ինչ-որ սահմանված է եղել իր իսկ գնառաջարկում և համապատասխանաբար պայմանագրում /ներառյալ կիրառելի բոլոր հարկերը, այդ թվում՝ ԱԱՀ/ և տվյալ պարագայում անհիմն է ենթադրություն կատարել, որ տվյալ գործարքի նկատմամբ կիրառելի է ԱԱՀ, իսկ կազմակերպությունը ստացել է 2,500.0 հազ. դրամ ավել գումար, ինչը պետք է վերականգնվի պետական բյուջե: Կարծում ենք տվյալ պարագայում ԱԱՀ կիրառելիության մասին կարգավորումը հստակ սահմանված է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով: Հատկանշական է նաև այն, որ <u>տվյալ պայմանագրի ֆինանսավորմանը ՀՀ պետական բյուջեն մասնակցություն չի ունեցել և որևէ գումար պետական բյուջե չի կարող վերականգնվել: Եթե նույնիսկ վերականգնման խնդիր լիներ, ապա ըստ միջազգային համաձայնագրի դրույթների վերականգնման ենթակա գումարը պետք է վերադարձվի դրամաշնորհ հատկացնողին՝ Հոլանդիայի թագավորության պետական բյուջե:</u>	
29	Ընդհանուր առմամբ, դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի իրականացման ընթացքում ԾԻԳ-ը չի ապահովել Համաշխարհային բանկի գնման ուղեցույցի 1.2 հոդվածով սահմանված առաջնային պահանջը՝ ծրագրի խնայողաբար և արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը:	Կրկին հարկ ենք համարում նշել, որ Համաշխարհային բանկի գնման ուղեցույցները չեն սահմանում որևէ դրույթի առաջնայնություն մնացած դրույթների համեմատ: Հետևաբար, Համաշխարհային բանկի ուղեցույցների բոլոր պահանջները պետք է դիտարկել դրանց ամբողջականության մեջ, հաշվի առնելով տվյալ իրավահարաբերության նկատմամբ բոլոր պահանջների համադրությունը: Հաշվետվության տվյալ դրվագը ընդհանուր բնույթի դեկլարատիվ եզրահանգում է պարունակում և անտեսում է լիովին հիմնավորված որոշումների առկայությունը, փաստորեն աղավաղելով իրական տվյալները և թաքցնելով ամբողջական տեղեկատվության արտացոլումը: Միաժամանակ տվյալ դրվագը	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

		միանգամայն անհիմն եզրահանգում է ներկայացնում Համաշխարհային բանկի ընթացակարգերի պահանջները չկատարելու մասին: <u>Կարծում ենք, որ այդ ընթացակարգերի շեղումներին հետևողը տվյալ դեպքում հենց Համաշխարհային բանկն է հանդիսանում, որն էլ, պատշաճ տեղեկացված լինելով բոլոր կայացված որոշումների մասին, սահմանված կարգով հաստատել է գնահատող հանձնաժողովների համապատասխան որոշումները:</u>	
	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ		
30	1. ԾԻԳ-ը երկու մրցույթներով մերժել է կապալի պայմանագրերով ստանձնվող պարտավորությունների կատարման համար էական ազդեցություն չունեցող ֆորմալ բնույթի անհամապատասխանություններ պարունակող նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերը, որի արդյունքում պայմանագրերի արժեքը թանկացել է գումարային 177,111,4 հազ. դրամով, և նվազել է վարկային միջոցների օգտագործման արդյունավետությունը:	Սույն <u>եզրակացությունը անհիմն է, քանզի դրա հիմքում դրված փաստերը աղավաղված են</u> , ինչի մասին արդեն իսկ հիշատակել ենք կետ 1-ում, կետ 2-ում և կետ 4-ում;	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:
31	2. ՀՀ գանձապետարանի կողմից նախնական հսկողության բացակայության պայմաններում ԾԻԳ-ը, առանց շինարարական կապալի պայմանագրերի փոփոխության կամ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու, կատարողական ակտերով ընդունել և վարկային միջոցների հաշվին կապալառուներին վճարել է ՀՀ կառավարության որոշումներով հաստատված պայմանագրային արժեքից 223,824.7 հազ. դրամով ավելի:	Սույն <u>եզրակացությունը նույնպես անհիմն է, քանզի դրա հիմքում դրված փաստերը և կարգավորման ենթակա իրավահարաբերությունների վերաբերյալ գնահատականները նույնպես աղավաղված են, իսկ կողմերի միջև պայմանագրային փաստաթղթերի բացակայության վերաբերյալ դրույթը ուղղակի սուտ է</u> , ինչի մասին արդեն իսկ հիշատակել ենք կետեր 6-ում;	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

32	3. Շինարարական օբյեկտների մրցույթի գնման առարկայի ծավալաթերթի ծավալները չճշտելու և ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգին» համապատասխան հաշվարկված նախահաշվային արժեքները գերազանցող գնով կապալի պայմանագրեր կնքելու արդյունքում վարկային միջոցների անարդյունավետ ծախսը կազմել է 270,223.3 հազ. դրամ:	Սույն եզրակացությունը հանդիսանում է անհարկի շահարկում և նույնպես <u>անհիմն է, քանզի բոլոր շինարարական պայմանագրերով պատշաճ փորձաքննություն անցած նախահաշիվների հանրագումարի համեմատ մրցույթների արդյունքում շուրջ 254,304.08 հազ. ՀՀ դրամ չափով տնտեսումը, իսկ այդ նախահաշիվներում չներառված 218,562.19 հազ. դրամի աշխատանքները իրականացնելու՝ շենքերը կառուցումը ավարտին հասցնելու արդյունքում այնուամենայնիվ նախահաշիվների հանրագումարի համեմատ 26,7412.9 հազ. դրամ տնտեսում ունենալը չի կարող դիտարկվել «վարկային միջոցների անարդյունավետ ծախս»,</u> ինչը հստակ արտացոլված է կից Հավելված 1-ում:	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:
33	4. Նախագծող կազմակերպությունների կողմից կազմած նախագծանախահաշվային փաստաթղթերում և ծավալաթերթերում առկա տարբերություններն ազդել են մրցույթի մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների ձևավորման և մրցութային հանձնաժողովի կողմից դրանց գնահատման վրա:	Սույն եզրակացությունը հանդիսանում է <u>պատվիրատուի իրավասությունները անհարկի՝ ՀՀ օրենսդրության պահանջներից չբխող եղանակով սահմանափակելու դրույթ</u>, ինչի մասին նշել ենք կետ 10 և կետ 11;	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:
34	5. ՀՀ արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոնի վերակառուցման ընթացքում ասֆալտապատման աշխատանքները կատարվել են առանց ենթակապալառու ներգրավելու՝ «Փարվանպրոմ» ՍՊԸ կողմից, որը այդ աշխատանքի կատարման համար լիցենզիա չէր ներկայացրել: Աշխատանքը կատարվել է անորակ՝ «ՇՆևԿ 3.06.03-85»-ով սահմանված տեխնոլոգիական պահանջների խախտումներով, կատարված աշխատանքի որակի	5-րդ և 6-րդ կետերով կատարված եզրակացությունները հանդիսանում են <u>չհիմնավորված և չեն պարունակում նման եզրահանգումներ կատարելու համար որևէ փաստաթղթային հիմնավորում</u>, ինչպես նշել ենք կետ 19, կետ 20, կետ 21 և կետ 22-ում: Ինչպես նշված է՝ «դատաիրավական բարեփոխումների ծրագրի շրջանակներում կառուցված այլ օբյեկտների որակ»-ը որպես նման եզրահանգման համար չափանիշ ընդունելը սուբյեկտիվ և անհարկի համեմատություն է հատկապես այն պարագայում, որ հաշվետվության այլ դրվագներով այդ աշխատանքների կատարումը արդեն իսկ գնահատվել է որպես «վարկային	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

	համապատասխանությունը ԳՈՍՏ 9128-84 պահանջներին տեխնիկական հսկողության կողմից չի հավաստվել: Արդյունքում, ասֆալտապատման աշխատանքները ենթակա են կրկնակի կատարման օբյեկտի երաշխիքային գումարի հաշվին, իսկ անորակ աշխատանքի դիմաց վճարված 2.996.0 հազ. դրամը «Փարվանպրոմ» ՍՊԸ կողմից ենթակա է վերականգման պետական բյուջե: 6. ԾԻԳ-ի կողմից պետական գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված «Փարվանպրոմ» ՍՊԸ հետ կապալի պայմանագիրը չլուծելու հետևանքով վերակառուցված փորձագիտական կենտրոնը չի համապատասխանում Դատաիրավական բարեփոխումների ծրագրի շրջանակներում կառուցված այլ օբյեկտների որակին՝ աշխատանքները կատարվել են ցածրորակ շինարարական նյութերով և թերություններով, որը անհրաժեշտ է վերացնել պայմանագրով նախատեսված 11,435.2 հազ. դրամ երաշխիքային գումարի հաշվին:	միջոցների անարդյունավետ ծախս»;	
35	7. Վճարային համակարգերով հագեցված տերմինալներ գնելու արդյունքում դատական համակարգի կարիքներին անհրաժեշտ յուրաքանչյուր տերմինալի ձեռք բերման համար ԾԻԳ-ը ծախսել է ստուգման ժամանակաշրջանում շուկայում առկա տեղեկատվական տերմինալների գնից	7-րդ և 8-րդ կետերով կատարված <u>եզրակացությունները հանդիսանում են չիմնավորված և չեն պարունակում տվյալ ապրանքների իրական բնութագրերով և մասնագրերով շուկայի մոնիթորինգ իրականացնելու արդյունք</u>, ինչի մասին նշել ենք կետ 23-ում: Իրական մոնիթորինգի արդյունքները մեր կողմից կատարված են և առկա են ԾԻԳ-ում: ՀՀ վերահսկիչ	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

	/ներառյալ՝ բոլոր հարկերը և վճարները/ առնվազն երկու անգամ ավելի գումար, կամ ոչ նպատակային և անարդյունավետ ծախսվել է 185,000.0 հազ. դրամ: 8.Ծրագրի շրջանակներում կահույք ձեռք բերելու համար շուկան չուսումնասիրելու և աթոռների գնումը առանձին լոտով չիրականացնելու հետևանքով ԾԻԳ-ը աթոռները գնել է 2.5-ից 3 անգամ թանկ, և անարդյունավետ ծախսվել է 28,508.6 հազ. դրամ:	պալատի կողմից փոխարենը կատարված է ըստ էության չհամեմատվող մասնագրեր և բնութագրեր ունեցող ապրանքների անհասկանալի և տեսական դիտարկումներ, որոնք անարժանահավատ են և չունեն անհրաժեշտ փաստաթղթային հիմնավորում նման եզրակացություն կատարելու համար;	
36	Հնարավոր չէ որոշել անհայտ կատարողներով «Դատական գլոբալ ցանցի կազմակերպման տեխնիկատնտեսական հիմնավորում, դատական համակարգում շահագործվող ծրագրային ապահովման միջոցների կարիքների գնահատում, ԴԱՀ ծրագրի ֆունկցիոնալության ընդլայնում» և «Էլեկտրոնային արխիվավարման ծրագրային համակարգի մշակում» ծրագրերի իրականացման համար կատարված ծախսերի արդյունավետությունը և հիմնավորվածությունը:	Սույն <u>եզրակացությունը հանդիսանում է անհարկի, քանզի նշված համակարգչային ծրագրերի արդյունավետությունը որոշելու համար հնարավոր և պետք էր ընդամենը կիրառել պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերի համեմատ մասնագիտական վերլուծություններ և գնահատումներ</u>, ինչի մասին նշել ենք կետ 25, լետ 26 և կետ 27-ում: Այսպես, կարծում ենք անհրաժեշտ էր իրականացնել փաստացի արդեն իսկ շուրջ 3 տարի երկրի ամբողջ դատական համակարգի կողմից շուրջ 800-900 պաշտոնատար անձանց կողմից շահագործվող համակարգչային ծրագրի, հանրության մոտ լայն ճանաչում ունեցող «Դատալեքս» համակարգի և ՀՀ դատական դեպարտամենտին տրամադրված համակարգչային ծրագրերի առաջնային կողերի և ծրագրային ֆունկցիոնալության վերլուծություններ և դրանց տալ դատական համակարգի վրա գործունեության արդյունավետության վրա ազդեցության գնահատականներ; ՀՀ վերահսկիչ պալատը Դատաիրավական բարեփոխումների ծրագրի ծախսերի արդյունավետության վերաբերյալ անհիմն և անհարկի եզրահանգումներ կատարելիս հաշվի չի առել այն հանգամանքը, որ ծրագրի անհարկի քննադատության առարկա հանդիսացող մի շարք միջոցառումներ հանդիսացել են Եվրոպական Միության կողմից	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

		Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող բյուջետային օժանդակության դրամաշնորհներով համապատասխան տրանշերի հատկացման նախապայմաններ: Օրինակ՝ միայն ԵՄ Երկրորդ փոփոխական տրանշի (4 միլիոն եվրո) 2010 թվականին պետական բյուջեին ուղղակի հատկացվող գումարի 65% (գումարային 2.6 միլիոն եվրո), ինչպես նաև ԵՄ Երրորդ փոփոխական տրանշի (4 միլիոն եվրո) 2011 թվականին պետական բյուջեին ուղղակի հատկացվող գումարի 50% (գումարային 2.0 միլիոն եվրո) ուղղակիորեն կապված է եղել քննադատության ենթարկված և անարդյունավետ հրչակվող ծրագրերը հաջող իրականացնելու և ԵՄ պատվիրակությունների կողմից դրանք բավարար գնահատելու հետ:	
37	«Պետական տուրքերի և պետության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց այլ վճարների էլեկտրոնային վճարման միասնական համակարգի» ստեղծման համար ավելացված արժեքի հարկ չվճարող «Հելիքս Կոնսալթինգ» ՍՊԸ-ին ԾԻԳ-ը փոխանցել է 15,000.0 հազ. դրամ, այդ թվում՝ ԱԱՀ: Ավելացված արժեքի հարկի չափով ստացված 2,500.0 հազ. դրամը «Հելիքս Կոնսալթինգ» ՍՊԸ կողմից ենթակա է վերականգման պետական բյուջե:	Սույն <u>եզրակացությունը նույնպես հանդիսանում է անհիմն, քանզի նշված եզրակացությունը չի բխում պատվիրատուի և մատակարարի միջև պայմանագրի էությունից կամ կարգավորումից</u>, ինչի մասին նշել ենք կետ 28-ում;	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:
38	Ընդհանուր առմամբ, դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի իրականացման ընթացքում ԾԻԳ-ը չի ապահովել Համաշխարհային բանկի գնման ուղեցույցի 1.2 հոդվածով սահմանված առաջնային պահանջը՝ ծրագրի խնայողաբար և արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը:	Սույն եզրակացությունը ահնիմն է և պարունակում է անարժանահավատ գնահատական: Նախ եզրակացությունը չի պարունակում հղում թե Համաշխարհային Բանկի կողմից ընդունված ո՞ր գնման ուղեցույցի (Համաշխարհային բանկի կողմից կիրառվում են բազմաթիվ գնման ուղեցույցներ) պահանջները չեն կատարվել: Ավելին, ՀՀ վերահսկիչ պալատը իր նման եզրակացությամբ անտեսել է այն փաստը, որ Համաշխարհային բանկի ուղեցույցների պահանջները կատարելու համար հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված է հենց Համաշխարհային բանկը և վերջինս իր կողմից իրականացված բոլոր ստուգայցերի,	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Քայլեր և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

		առաքելությունների, գնահատականների և կազմված հաշվետվությունների և փաստաթղթերի մեջ երբեք չի արածանագրել մի դեպք, որ դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի իրականացման ընթացքում ԾԻԳ-ը խախտել է որևէ գնման ուղեցույցի պահանջ:	
	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ կառավարությանը՝		
39	Բյուջետային միջոցների շրջանառման նկատմամբ միասնական կարգով գանձապետական հսկողության իրականացնելու նպատակով միջազգային համաձայնագրերով տրամադրվող բյուջետային միջոցների նկատմամբ ՀՀ կառավարության որոշումով սահմանել նախնական հսկողության գործառույթների իրականացում ՀՀ գանձապետարանի կողմից:	<u>Միջազգային համաձայնագրերով տրամադրվող միջոցների նկատմամբ ՀՀ կառավարության որոշումով ՀՀ գանձապետարանի կողմից նախնական հսկողության գործառույթների իրականացում սահմանելու առաջարկությունը իրավաչափ չէ,</u> քանզի նման ՀՀ կառավարության որոշում չի կարող ընդունվել, եթե ՀՀ կողմից ստանձնած միջազգային համաձայնագրերով սահմանված են նման գործառույթի իրականացումը սահմանափակող պահանջներ;	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Առաջարկությունը ընդունվել է ի գիտություն:
40	Շինարարական աշխատանքների մրցույթներին ներկայացվող գնային առաջարկների հիմնավորվածությունը պատշաճ գնահատելու նպատակով գնման գործընթացը կարգավորող իրավական ակտերում սահմանել պահանջ՝ պատվիրատուի կողմից մրցույթի հրավերով տրամադրվող ծավալաթերթը և մրցույթի մասնակիցների կողմից ներկայացվող ծավալաթերթ նախահաշիվները կազմել փորձաքննություն անցած և սահմանված կարգով հաստատված նախահաշվի կառուցվածքին, բովանդակությանը և գնագոյացման մեթոդաբանությանը համապատասխան:	<u>Շինարարական աշխատանքների մրցույթներին ներկայացվող գնային առաջարկների հիմնավորվածությունը պատշաճ գնահատելու նպատակով գնման գործընթացը կարգավորող իրավական ակտերում ՀՀ կառավարության կողմից իր որոշումներով պահանջներ սահմանելու վերաբերյալ նույնպես իրավաչափ չէ</u> Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրի ստուգման արդյունքում նման առաջարկություն կատարելու համար: Հարկ է նշել, որ շինարարական աշխատանքների համար կիրառվող մրցութային փաստաթղթերի, այդ թվում՝ պայմանագրի մաս կազմող ծավալաթերթ-նախահաշիվները կազմելու պահանջները ամրագրված են Համաշխարհային բանկի կողմից ընդունված և <u>միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների համաձայն: ԾԻԳ-երի կողմից պարտադիր կիրառման ենթակա են ստանդարտացված մրցութային փաստաթղթեր, որոնց ձևը և բովանդակությունը չի կարող փոփոխվել ՀՀ կառավարության որոշումներով:</u>	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Առաջարկությունը ընդունվել է ի գիտություն:

		Ուստի, կարծում ենք նման առաջարկություն կարող է ուղղվել միայն Համաշխարհային բանկին:	
	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին՝		
41	Ղեկավարվել Համաշխարհային բանկի գնումների ուղեցույցի պահանջով՝ վարկային և դրամանշնորհային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերը կատարել խնայողաբար և արդյունավետ:	Համաշխարհային բանկի գնումների ուղեցույցների պահանջներով ղեկավարվելու առաջարկությունը ընդհանուր առմամբ ընդունելի է, սակայն տվյալ դեպքում անհարկի է, քանզի <u>ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում ԾԻԳ-ը առաջնորդվել է հենց այդ ուղեցույցների պահանջների խստիվ պահպանմամբ:</u> Արդյունքում նման պահանջներին հետևելը ՀՀ վերահսկիչ պալատի կարծիքով առաջացնում է ծախսերի «անարդյունավետության» գնահատման դեպքեր:	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Առաջարկությունը ընդունվել է ի գիտություն:
42	Վարկային և դրամանշնորհային միջոցների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով գնումների պլանը կազմել ծրագրով անհրաժեշտ կարիքներին համապատասխան հիմնավորում ունեցող գներով,	Ծրագրի գնումների պլանը կազմելու վերաբերյալ առաջարկությունը ընդհանուր առմամբ ընդունելի է: <u>Գնումների պլանը միշտ կազմվել է ծրագրով անհրաժեշտ կարիքներին համապատասխան շուկայական գները հաշվի առնելով:</u> Այս առումով հարկ ենք համարում նշել, որ եթե ՀՀ վերահսկիչ պալատում առկա է անհրաժեշտ կարիքներին համապատասխան հիմնավորում ունեցող գները որոշելու այլ մոտեցումներ կամ հստակ փաստաթղթային մեթոդիկա, ապա պատրաստ ենք քննարկել և կիրառության մեջ դնել նման մեթոդները:	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: Առաջարկությունը ընդունվել է ի գիտություն:
43	Ձեռնարկել միջոցներ՝ վերականգման ենթակա գումարների մուտքը բյուջե ապահովելու, ինչպես նաև կատարված շինարարական աշխատանքների թերությունները երաշխիքային գումարի հաշվին վերացնելու նպատակով:	ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարների մուտքը ապահովելու համար միջոցներ ձեռնարկելու մասով տեղեկացնում ենք, որ <u>ամբողջ հաշվետվությունում չկա հիշատկված վերականգնման ենթակա գումարներ, որոնք հնարավոր լինի ապահովել պետական բյուջե փոխանցումով:</u> Այսպես, <u>ամբողջ հաշվետվությունում նշված են ընդամենը վերականգնման ենթակա հետևյալ 2 դեպքերը՝</u> ա/ 2,996.0 հազ. դրամը «Փարվանապրոմ» ՍՊԸ-ից վերականգնելու վերաբերյալ և	Տվյալ դեպքում խախտում առկա չէ: ՀՀ վերահսկիչ պալատին ԾԻԳ-ի կողմից ուղղվել է գրավոր հարցում՝ պարզաբանել հաշվետվությունում նշվածը առաջարկությունը դրա իրականացման եղանակը: Պարզաբանում ներկայացնելու պարագայում կձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր:

	ք/ 2,500.0 հազ. դրամը «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ կողմից վերականգնելու վերաբերյալ Այս առումով հարկ ենք համարում նշել, որ «Փարվանապրոմ» ՍՊԸ պարագայում /եթե նույնիսկ նշված գումարը պայմանական համարենք վերականգնման ենթակա/, ապա դա կատարել ուղղակի հնարավոր չէ այն պարզ պատճառով, <u>որ նշված աշխատանքի համար կապալառուին նշված չափով գումարը ընդհանրապես երբեք չի վճարվել:</u> Ինչ վերաբերվում է «Հելիքս Կոնսալթինգ» ՍՊԸ գումարին /կրկին եթե նույնիսկ նշված գումարը պայմանական համարենք վերականգնման ենթակա/, ապա <u>այդ գումարը որևէ կերպ չի կարող վերականգնվել ՀՀ պետական բյուջե, քանի որ նշված պայմանագիրը ֆինանսավորվել է բացառապես Հոլանդական դրամաշնորհի միջոցներից և փաստացի ծրագրի նպատակների համար չծախսված կամ ավել վճարված գումարները համաձայն ՀՀ կողմից ստանձնած միջազգային համաձայնագրերով պահանջների պետք է վերադարձվեն դրամաշնորհ հատկացնողին՝ Հոլանդիայի թագավորության կառավարությանը:</u>	
--	--	--

Հավելված 1

**«ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՐԿՐՈՐԴ» ԾՐԱԳՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ**

հազ. դրամ

h/h	Օբյեկտի անվանումը	Կապալառու	Ամփոփ նախահաշվային արժեք՝ <u>համալիր</u> <u>փորձաքննություն</u> <u>անցած և</u> <u>պաշտոնապես</u> <u>հաստատված</u>	Պայմանագրային արժեք (<u>սկզբնական</u>)	Տարբերություն, այն է՝ բացասական նշանով տնտեսումներ փորձաքննությո ւն անցած և հաստատված նախահաշվի համեմատ	Պայմանագրային արժեք փաստացի վճարված (<u>վերջնական</u>) Ներառում է նաև ամփոփ նախահաշվում չներառված լարցուցիչ անհրաժեշտ աշխատանքները	Պայմանագրի ընթացքում <u>լրացուցիչ</u> <u>պատվիրված</u> <u>կամ ավել</u> <u>հաշվարկված</u> <u>աշխատանքներ</u> • որոնք բացակայել են Ամփափ Նախահաշվի հաշվարկում
I	II	III	IV	V	VI=V-IV	VII	VIII=VII-V
1	ՀՀ ԱՆ փորձագիտական կենտրոնի վերակառուցում	«Փարվանապր ոմ» ՍՊԸ	223,006.65	218,778.60	-4,228.05	204,443.16	<u>-14,335.44</u>
2	Սպիտակ քաղաքի դատարանի կառուցում	«Երևանշին» ՓԲԸ	507,265.81	494,159.50	-13,106.31	516,130.29	21,970.79
3	Զարենցավան քաղաքի դատարանի կառուցում	«Արարատշին» ՓԲԸ	396,832.71	399,795.50	2,962.79	384,414.82	<u>-15,380.68</u>
4	Ապարան քաղաքի դատարանի վերակառուցում	«Երևանշին» ՓԲԸ	278,387.25	262,173.30	-16,213.95	286,116.28	23,942.98
5	Մեղրի քաղաքի դատարանի կառուցում	«ՀԱԷԿ-ի շինարար-ն» ՓԲԸ	476,214.45	475,103.30	-1,111.15	512,525.63	37,422.33
6	Արդարադատությ ան դպրոցի համալիրի կառուցում	«Ախուրյանի կոոպշին» ՍՊԸ	829,588.88	769,244.90	-60,343.98	844,681.21	75,436.31
7	Սևան քաղաքի դատարանի կառուցում	«Մեծն Էրիկ» ՍՊԸ	578,134.33	593,704.70	15,570.37	616,964.54	23,259.84
8	Եղեգնաձոր քաղաքի դատարանի կառուցում	«Արարատշին» ՓԲԸ	520,003.53	408,773.00	-111,230.53	434,690.60	25,917.60
9	Իջևան քաղաքի դատարանի կառուցում	«Ախուրյանի կոոպշին» ՍՊԸ	616,537.77	558,934.50	-57,603.27	599,262.96	40,328.46
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ		4,425,971.38	4,180,667.30	-245,304.08	4,399,229.48	218,562.19